

ՅՈՒՅԱԿ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԻՒՐՏԵԱՆ ՆԱԲԱԲԱԾՈՅԻ ՆԱՅԵՐԷՆ ԺԱՊԱԲԻՆԱԶԵԻ ՁԵՈՎԳԻՐ ՆՄԱՅԻՆՆԵՐԻ

Միխրաբեան միաբանության ընդհանրական աբբահայր Ն. Եղիա ծ. վ. Քիլադ-պետանը 2000 թ. մեզ առաջարկեց վերամշակել, լրացնել և հրապարակության պատրաստել Վենետիկի մայրավանքում պահպանուող՝ 300 միատր բովանդակող «Յարութիւն Քիւրպեան» ձեռագրական հաւաքածոի ցուցակը, որ իր մահուանից՝ 1979ից առաջ հաւաքածոի Կիւրքեանը կազմել էր իւրօրինակ՝ գիտութեան մէջ ընդունուածից բաւական քարքերու ու սկզբունքով (479 մեքենագիր էջ, 300 ձեռագրից նկարագրել էր 250ը): Սպանալով այդ ցուցակի համակարգչային շարուածքը և այն հնարաւոր չափով յարմարեցնելով ձեռագրերի նկարագրութեան ներկայումս ընդունուած սկզբունքներին, երեք անգամ՝ 2001, 2002 և 2004 թթ. մեկնեցինք Վենետիկ, ամէն անգամ 1, 2 և 2,5 ամիս Ս. Ղազարում աշխատեցինք և հիմնովին վերանայեցինք բաւական շատ ձեռագրերի նկարագրութիւններ, որոնք մեր աշխատանքից յետոյ սկզբնական նկարագրութիւններին բոլորովին նման չէին լինում:

Աշխատանքի ընթացքում աբբահայրը մէկ կամ միւս անգամ որպէս նոր նիւթ մեզ քրտաւորեց նախ Քիւրպեանի արխիւը¹, ապա՝ 21 կոնդակ և նոյնքան ժապախանաձև Նմայիլ:

Այս բոլորը նայնպէս նկարագրեցինք և մտադիր էինք որպէս յաւելումներ գերեզել «Յուցակ հայերէն ձեռագրաց «Յարութիւն Քիւրպեան» հաւաքածոի» անուանելի սպորտար հատորի մէջ: Սակայն, հակառակ նրան, որ հսկայ աշխատանքի ճիշդ կէսն արել ենք, հանգամանքների բերումով և մեզանից անկախ պատճառներով հատորի ամբողջացումն ուշանում է, ուստի որոշեցինք յաւելումային այս նիւթերն ամսագրային հրապարակմամբ դնել գիտական շրջանառութեան մէջ²: Ըստ այսմ՝ ներկայումս հրապարակում ենք Քիւրպեան հաւաքածոի Նմայիլների նկարագրութիւնները³:

Նմայիլները նկարագրել ենք 2004 թ. սեպտեմբերին. Քիւրպեանի անձնական թղթերի մէջ չարտանք որեւէ հետք, որ մտածել քար թէ սրանք երբեւէ նա նկարագրել կամ սրանց վերաբերող հրապարակումներ է արել, հակառակ սրան՝ փաթեթ-հմայիլներն ունէին 1-22 համարներ (վերջին երկուսը միացրինք, եղաւ 21 միատր. քրէս 21րդի նկա-

1 Ի պահանջել հարկի կարելի է հրապարակել նաեւ արխիւի ցուցակը, սակայն սա շատ էլ արժեքաւոր չէ. քրտեղ ենք երկու հիմնական մասի. ա. «Յարութիւն Քիւրպեան հաւաքածոի դիւանական մաս» (նոր ժամանակների վերաբերող ձեռագիր և քրտագիր փաստաթղթեր են) և բ. «Անձնական դիւան Յարութիւն Քիւրպեանի» (կազմուած է մեծ մասամբ ձեռագրերի մանրանկար էջերի յաւանակարներից): Վերջինիս գիտական արժէք ունեցող մի միատր՝ Ն. Ալիսեանից սրացած 7 նամակ և Ն. Ն. Ոսկեանի գրած 2 բացիկ արդէն հրապարակել ենք. քրէս **Գեորգ Տէր-Վարդանեան**, Ն. Ներսէս, Ալիսեանի և Ն. Նամագաստ Ոսկեանի նամակները Յարութիւն Քիւրպեանին.- Նաեղէս ամսօրեայ, 2005/1-12, էջ 457-480:

2 Եթէ Աստուած քար և մի օր հնարաւոր լինի հաւաքածոի ցուցակն ամբողջացնել և հրապարակել, ապա այդ հատորի մէջ այս յաւելումային մասերի վերահրապարակումն ստեղծող չի լինի:

3 Յաջորդիւ քրտագրելու ենք կոնդակների նկարագրութիւնները և բնագրերի ամբողջական վերծանութիւնները:

րագրությունը): Ըստ այսմ՝ հասկանալի է, որ համարները դրուել են միայն նիւթի հաշիւը պահելու համար: Այսուհանդերձ, ըստ որևէ (ասենք՝ ժամանակագրական) յարկանիշի վերադասատրելը և նոր համարներ նշանակելն անարդի համարեցինք և նկարագրեցինք ըստ առկա համարների:

Նայելեն ձեռագրերի շարքում կան Պահպանութեան գիր, Կիպրիանոս, Նմայիլ (Նամայիլ) անունով հարիրաւոր միաւորներ. զգալի մասը գրքաձև է (այս դէպքում սրանք փոքրադիր՝ գրպանում փրկաւորելի չափսի են), քիչ չեն նաև ժապաւինաձև միաւորները: Մեր ձեռագրացուցակներում երբեմն հանդիպում են մէկ կամ միւս փեսակի Նմայիլների անմիօրինակ, ցրի նկարագրութիւններ, ըստ որոնց հասկանալի է դառնում, որ հայերէն ձեռագրերի հաւաքածուների մէջ ընդհանրապէս այս փաթեթ-ձեռագրերը համաբաւալութեամբ են գրքաձև մաքրեանների հետ նոյն շարքում: Միւրթարեան Վենետիկի հաւաքածուի մէջ եւս այդպէս է. ասենք՝ փոքրիկ մի փաթեթ ըստ իր համարի դրուած է հսկայակազմ մաքրեանների միջեւ, առկա է 50 միաւոր էլ կայ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր հաւաքածուի մէջ: Սակայն Մաշտոցեան Մաքրեանադարանում ձեռագրական հաւաքածուներն առաւել խելամիտ ձևով են մշակուած. կաշեկազմերի մէջ ամփոփուած ամբողջական գրքերի՝ Նայելեն ձեռագրերի հիմնական հաւաքածուի 1-11205 համարներից փաթեթը շարքով և առանձին պահարանում պահպանում են 1-512 համարներով ժապաւինաձև Նմայիլներ⁴:

Բովանդակած նիւթի համեմատ Նմայիլները երևի թէ կիսով քրիստոնէական բնոյթ ունեն՝ ընդհուպ մինչև Ներսէս Շնորհալիի «Նաւարով խոստովանիւմ» սկսուածքով աղօթքը, Բժշկութեան աւերարանական քաղուածքներ կամ Նարեկացու Մարեանի հարումներ, սակայն կէսից աւելիով էլ եկեղեցու և քրիստոնէութեան հետ կապ չունեցող՝ գուշակողական⁵ բնոյթի են և կապում են նոյնաբնոյթ պարսկա-արաբալեզու գրականութեան հետ: Փաթեթաձև հմայիլները գրքի հնագոյն մի փեսակը լինելով, ձեռագիր փեսքով մեր իրականութեան մէջ գոյարել են ընդհուպ մինչև Ի. դարի սկիզբները (փեսեղ ենք անգամ 1915 թ. Էջմիածնում գրուած օրինակ), եղել են նաև հնարիւր հրապարակութիւններ. ըստ այսմ՝ սրանք գիտականօրէն կարելի են առաջին հերթին որպէս փաթեթա-ժապաւինաձև ԳԻՐԲ, պակաս էական չէ նաև սրանց բովանդակութեան ուսումնասիրությունը, ի վերջոյ՝ շար ուշագրաւ է Նմայիլների մանրանկարչությունը՝ թէ՛ պարկերագրութեան և թէ՛ ընդհանրապէս արուեստի փեսանկիւնից:

Նիւթի այս արժանիքները նկարի ունենալով՝ համալսարանական մեր սան և Մաքրեանադարանի ձեռագրարան օգնական Դաիթ Ղազարեանը նկարագրում է Մաշտոցեան Մաքրեանադարանի ժապաւինաձև Նմայիլների հաւաքածուն, միաժամանակ՝ ուսումնասիրում է նրանց մանրանկարչական արուեստը: Մտածում ենք, որ աշխարհներն ընդլայնելով և միւս հաւաքածուների, առաջին հերթին՝ Մայր Աթոռի ձեռագիր հմայիլ-

4 Սրանց մի զգալի մասը գնումների եղանակով ձեռք են բերուել վերջին փաստաւեանների ընթացքում. և անհար մարդկանց ձեռքին այսպիսի ժապաւինաձև հմայիլներ դեռես շար կան:

5 Տե՛ս Զ. Ս. Անտոնեան, Նայկական մաքրեանագիտութիւն. Ե-ԺԸ. դր., հր. Ա., Եւան, 1959, էջ 424-67՝ Արարարական գրականութիւն, էջ 540-9՝ Աղափ կամ Աղաւթ: Այս բառայօղութիւնները հիմնուած են մեծաւ մասամբ փաղկիր նիւթի վրայ:

ները հեղափոխելով, չմոռանալով նաև հնարիպ հրապարակությունները, նա պարզելով է մեր ձեռագիր գրքարուեստի ասպարեզին վերաբերող բազմաթիվ կարևոր խնդիրներ:

Ահա այդ մեծ նպատակին նպաստելու համար կարևոր և անհրաժեշտ համարեցինք հմայիլների այս փոքրիկ հաւաքածուի ցուցակի հրապարակումը. արտակալ սա սովորական ձեռագիր գրքից շատ փոքրերով է փոքրերում, ուստի և եղածը պարզաճանկարկայացնել կարողանալու համար այս նկարագրությունների մեջ մանր թուացող շատ խնդիրներ ենք լուծել:

Պարունակած նիւթն առելի առարկայօրէն արտանւայի դարձնելու նպատակով վերջում դրեցինք «Հմայիլների ընդհանուր աղիւսակ», ըստ որի՝ Բիւրքան հաւաքածուի 21 միատրների ժամանակագրական պարկերը հետեւեալն է. ԺԶ. դ., 1631, 1663, 1667, 1681, 1687 թթ., ԺԷ. դ., ԺԸ. դ., 1717, 1721, 1724, 1730, 1733, 1744, 1772 թթ., 1773ից առաջ, ԺԸ. դ.՝ 5 միատր⁶: Ժապաւենների լայնքը մօտ 6-13 սմ է, երկայնքի փոքրագոյն թիւր 49 սմ է (Ն^օ 10), ամենաերկարը՝ 923 սմ (Ն^օ 16). սրանով հանդերձ՝ ամբողջապէս, անթերի հասած օրինակները միայն 3ն են (Ն^օ 3, 15, 18), մնացածների մեծ մասը պակասատր են սկզբից, շարքերը՝ նաև վերջից. պահպանութեան այս ցուցանիշները հմայիլների համար գրեթէ ընդհանրական են՝ մշտապէս լաւագոյնս գործածուել են, մաշուել և անդամաւոր կորուստներ կրել: Յայտնի է միայն 4ի գրչութեան փոքր [Կ. Պոլիս], Բաղէ, Պրոսա, Սուրբ Գեորգի թաղ (Ն^օ 3, 4, 5, 7): Որտե՞ս միատրի ծաղկողի անուն յայտնի չէ (ուստի աղիւսակում ծաղկողի անուն սին չենք դրել). 8 հմայիլի՝ անունով յայտնի գրիչներից 7ը հոգևորականներ են՝ քահանաներ են մի փոքրացու, ուշագրաւ է Ն^օ 3ի գրչի ինքնաբերականը՝ «ձեռամբ Գաբրիէլ ծաղկարարի, որ եմ որդի Մարկոս Պարկերահանի», 2ի նիւթը մագաղաթ է, միւսներինը՝ թուղթ, 5ի գիրը բոլորգիր, 14ինը՝ նոսրգիր, 1ինը՝ շղագիր, 1ը՝ փայգիր բոլորգիր:

Օգտակար համարեցինք նաև մանրանկարների այբբենական ցանկի կազմումը. սկզբում իսկ ասենք, որ 21ից 5ը (Ն^օ 6, 7, 10, 14, 17) նկարներ չունեն. նոյնանունները միատրելով հանդերձ, սրացանք 52 անուն նկար՝ 16 միատրի մեջ. այսպէս էլ արձանագրելի է այն հանգամանքը, որ վերջին՝ փայգիր միատրի նկարները բնոյթով (անուանացանկով) ձեռագիր հմայիլների նկարներից գրեթէ չեն փոքրերում, որ մի անգամ եւս հասարակում է, թէ՛ նաև այսպիսի հնարիպ հրապարակությունների հիմքում միշտ եղել են ձեռագիր օրինակներ:

Քանի որ Յակոբ Մեղապարտի առաջնեկ «Ուրբաթագիրք»ը բովանդակութեամբ գրեթէ նոյնական է Հմայիլների պարունակած նիւթի հետ, համարում ենք, որ այս հրապարակումը մեր փոքրիկ փորձն է հայկական փայգրութեան 500ամեայ յաջողութեան:

ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ

⁶ Ուշագրաւ է, որ Մխիթարեան Վենետիկի հաւաքածուի 26 միատր հմայիլների վրայ է հիմնուած այս նիւթի գոյութիւն ունեցող առայժմ միակ լուրջ ուսումնասիրութիւնը՝ Frederic Fejdít, Amulettes de l'Armenie chretienne, Venise, St. Lazare. 1986, 385 էջ և 90 նկար: Այդ 26 միատրի ժամանակագրական պարկերն էլ հետեւեալն է՝ ԺԶ-ԺԷ. դդ., 1677, 1680, 1690, 1690, 1693 թթ., ԺԸ. դ. (2 միատր), ԺԸ-ԺԸ. դդ. (2 միատր), 1703, 1709, 1710, 1713, 1715, 1731, 1742, 1760, 1779 թթ., ԺԸ. դ., 1801, 1808 և չթուագրուած 4 միատր. այս շարքի՝ 1709 և 1731 թթ. միատրները փայգիր են:

1 ՀՄԱՅԻՆ

ՌԶ. - 1631

ՄՏԱՅՈՂ՝ Տէր Աւետիս, իր կին Խանքէկի եւ դուստր Սառա:

ԹԵՐԹ՝ 1 (Ժապաւինաձեւ): ՆԻԻԹ՝ Թուղթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 442x12,9 սմ: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն. երկու կողմից զոյգ կարմրով սահմանագծուած (սկզբից 37 սմ երկարութեամբ՝ երկու գծի միջեւ եզերագարդ), գրադաշտի լայնքը՝ 10,2 սմ: ԳԻՐ՝ բոլորակ: ԳՈՅՆԵՐ՝ վարդագոյն, կանաչ, մանուշակագոյն, դարչնագոյն, սեւ, դեղին, ոսկեգոյն:

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ.

1. Կիւրիանոս (4րդ բնագրից առաջ).

2. Գրիգոր Նարեկացի.

Խորագիրք՝ կարմիր: Զարգացիրք՝ հանգուցային:

ՎԻՃԱԿ՝ սկիզբը թափուած, ամբողջը եզրամաշ, նկարների ներկերը թափուած, խորագրերի կարմիրը լուծուած՝ անընթեռնելի կամ դժուարընթեռնելի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. /// միաձնի առ ի Հօրէ /// եւ ճշմարտութեամբ Յովհաննէս վկայէ վասն նորա... զի աւրէնքի ի ձեռն Մովսէսի տուան շնորհքն եւ ճշմարտութիւնն ի ձ[եռն] Յիսուսի Քրիստոսի եղեն:

2. Աւետարան ըստ Ղուկասու - եւ էջ ի Կափառնաուժ, ի քաղաքն Գալիլեացոց, եւ ուսուցանէր զնոսա ի շաբաթսն... զի գիտէին զնա թէ Քրիստոսն է [Դ. 31-42]:

3. Աւետարան ըստ Մարկոսի - Մինչդեռ նա զայն խաւսէր, գան ոմանք ի ժողովրդապետէն եւ ասեն, թէ Դուստրն քո մեռաւ, զի՞ եւս աշխատ առնես զվարդապետը... պատուէր տայր նոցա, զի մի՛ ոք գիտացէ զայն. եւ ասաց՝ տալ նմա ուտել [Ե. 35-43]:

3. Աւետարան ըստ Մատթոսի - եւ ելեալ անտի Յիսուսի, գնաց ի կողմանս Տիրոսի եւ Սիդոնի... եւ բժշկեցաւ դուստր նորա ի նմին ժամու [ԺԵ. 21-28]:

4. Կապ[ա]նք գ[իւ]աց. Աղօթք սրբոյն Կիւրիանոսի, ասացեալ վասն չար կախարդաց եւ աղանդաւորաց, որ կապեն զորդիս մարդկան, եւ զԳՃ. եւ զԿԷ. (367) աղանդք եւ կախարդութիւնք արձակեալ եղիցին - Եւ՝ Կիւրիանոս ծառայ Յիսուսի Քրիստոսի, ազգաւ հելանեցի...

5. Կապանք դիւաց որ արձակեալ էք ի վերայ որդոց մարդկան - Այլ գետովք, այլ կրակով, այլ հիւանդութեամբ...

6. [Օրհնութիւն. չգրած] - Տէրն որ օրհնեաց զնախ[կ]ինն Ադամ, / զԵնովք, զՆոյ եւ զԱբրահամ, / նոյն օրհնութիւն անանցական / ծաւալեցէ անձամբ սոցայն... Այսքան սուրբքս որ աստ գրեցան / սմա յօգնական լինին յերկար / չտան տեսանել սմա փայթերակ / այլ խնդութիւն բազմագունակ (ծայրակապ՝ «Տէ՛ր ԱՌԱՔԵԱՒ ԱՍՅ»): Այսպէս աւրհնէ զսայ Աստուծով ընդանօք, տամբ եւ տեղօք, զոր աստ գրեցաք. մէն մէն կարգօք կատարեցէ Աստուած փութով:

7. [Աղօթք. բժշկուկթիւն գլխացաւի, տենդի եւ ամենայն չար ցաւի] - ՏէՐ ԶԱԻՐՈՒԹԵԱՆ ՍԱԲԱԽԱԼԹ, Աստուած Իսրայէլի, նայեա՛յ յաղաչանս ծառայիս քո Տէր Աւետիսին եւ Խանբէկուն, որպէս նայեցար յաղաչանե Երեքովի եւ բժշկեցեր զանգաւակուկթիւն նոցա ի ձեռն Եղիսէի մարգարէին...

8. Սրբոյն Գրիգորի Նարեկացոյ ասացեալ վասն Հիւանդաց - Որդի Աստուծոյ կենդանի, աւրհնեալդ յամենայնի Հօրդ ամենայնի...

9. [Գրիգորի Նարեկացոյ] Մաղթանք զօրաւոր վասն զարհուրանաց գիշերոյ - Ընկա՛լ քաղցրութեամբ, Տէր Աստուած, զդառնացողի զաղաչանս, մատի՛ր գլխութեամբ առ պատկառեալս դիմօք...

10. Ընդգլխամարտ դիւաց այս նուազ աղօթից եւ դիւայարսուռ ջերմութեամբ տաքնապ խոտաւորութեանց Աստուծով փարատիչ, ամէն. ամէն - Արդ, այսքանեաց անբաւից հրաշից հանդերձիչ Հայր ամենաստեղծ...

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

3րդ բնագրից յետոյ. Բարեխօսութեամբ սուրբ աւետարանչացն Յոհանու, Ղուկասու, Մարկոսի եւ Մաթէոսի պահեա՛ Բրիստոս <Քրիստոս> Աստուած մեր զՏէր Աւետիս եւ զկողակիցն՝ զՀամբէկին եւ զդուստրն իւր զՍառն յերեւելի եւ յանրեւոյթ թշնամոյն. ամէն:

4րդ բնագրի վերջում. Եւ մի՛ կարասցեն յաղթել ծառայիս Աստուծոյ Համբէկուն, դստերն՝ Սառին:

5րդ բնագրի վերջում. ...ո՛չ մերձենաս ի ծառայս Աստուծոյ Տէր Աւետիս, ի Համբէկին:

7րդ բնագրի վերջում. ...արա՛յ բժշկուկթիւն գլխացաւի, տենտի եւ ամենայն չար ցաւի ծառայիս Աստուծոյ Խանբէկուն:

10րդ բնագրի վերջում. Բարեխօսութեամբ սրբոյն Գրիգորի Նարեկացոյն չար աչքն խաւարի, չար լեզուն կապի, չար խորհուրդն ցրուի ի դէմ ծառայիս Աստուծոյ զՏէր Աւետիսին, Խանբէկուն եւ Սառային:

Վերջում. Գրեցաւ սուրբ Ճառս ի Թրակահանիս ՌԶ. (1631). դժողիս մի բերան Աստուած ողորմի ասացէ՛ք, եւ Աստուած ողորմի ասացէ՛ք Տէր Աւետիսին եւ իւր ծնողացն եւ ամենայն արեան մեծաւորացն. եւ որ զողորմին ասէ՛ Աստուած իւրն ողորմեսցի յիւր միւսանգամ գալըստեանն. ամէն:

2 ՀՄԱՅԻԼ

ՌՃԺԲ. - 1663

ՍՏԱՅՈՂ՝ Հետագայ. Խաչատուր (1669 թ.):

Թերթ՝ 1 (Ժապաւինաձեւ): Նիւթ՝ մագաղաթ: ՄեծՈւթիւն՝ 503,5x7,5 սմ: ԳրՈւթիւն՝ միասիւն. լայնքը 5,8 սմ, եզրերին՝ երկու կողմից 7 մմ լայնքի, մուգ կարմիր հէնքով զարդագծեր, որոնք բնագրերի միջեւ միանում են նոյնպիսի լայնքի ոճաւոր զարդագծերով: ԳիՐ՝ նոտրգիր: ԳՈՅՆԵՐ՝ մուգ եւ բաց կարմիր, մուգ եւ բաց կապոյտ, կանաչ, դեղին, դարչնագոյն, արծաթագոյն:

ՄԱՆՐԱՆ ԿԱՐԶՈՒԹԻՒՆ.

1. Յիսուս Քրիստոս:

2. Ծաղիկ (ծաղկամանով) եւ պտուղներ (նռնե՞ր):
3. Ներսէս Շնորհալի (Հայրապետական գաւազանով), ապա՝ կիսախորան:
4. Խաչելութիւն, վերին թեւին մակագրութիւն՝ «ՅՆԹՀ», ձախին արեգակ, աջին՝ լուսին (երկուսն էլ մարդադէմ), ցածուժ երկու Մարիամները:
5. Աստուածածին՝ մանուկ Յիսուսը գրկին:
6. Ս. Գրիգոր Լուսաւորիչ (Յրդ բնագրի մէջ):
7. Յովհաննէս Կարապետ (Յրդ բնագրի մէջ):
8. Ստեփաննոս Նախավկայ (Յրդ բնագրի մէջ):
9. Աբրահամի զոհաբերութիւնը (ծառի վրայ հրեշտակը եւ խոյը):
10. Հրեշտակ՝ կանգնած, ձեռքերի մէջ անորոշ առարկայ:
11. Սուրբ Գէորգ, սպիտակ ձիով, խոցում է վիշապին, վերը՝ ամպ, նրանից ցած՝ հրեշտակ:

Զարդադիրք՝ թռչնային, հանգուցային: Խորագիրք՝ կարմիր:

ՎԻԾԱԿ՝ սկզբից գուցէ մի նկար ընկած, նոյնպէս սկզբի 5 սմ երկարութեան մասի եզրերը մաշուած, եզրագարդերի ներկերը խունացած, որոշ տեղերում թանաքը թափուած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Աղաւթք Տեառն Ներսէսի Հայոց կաթողիկոսի՝ ասացեալ վասն պահպանութեան ծառայիս Աստուծոյ (Յնջածի վրայ այլ ձեռքով եւ թանաքով, սեւով՝ «Խաչատուրին») - Հաւատով Հոստովանիմ եւ երկիր պաշտենմ...

2. Մաղթանք առ սուրբ խաչելութիւն Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ վասն կապանացի դիւաց, կախարդաց, որ ոչ մերձենայ ի ծառայս Աստուծոյ (Յնջածի վրայ այլ ձեռքով եւ թանաքով, սեւով՝ «Խաչատուրին») - Թագաւոր հրգաւր, ապաւէն ծարաւելոց, փրկիչ նեղելոց...

Ծնթ. Բնագիրը՝ կանոնաւոր գծուած՝ 5,5 սմ տրամագծով 5 շրջանակի մէջ է, բաց մնացած մասերում մուգ եւ բաց կարմիր կլոր ծաղիկներ են՝ երեքական կանաչ տերեւով:

3. Մաղթանք սուրբ Աստուածածնին - Աստուածածին ամէնաւրհնեալ, զպաղատանս ընկա՛լ, ի հանգըստեան ժամուս հասեալ առ քեզ...

Ծնթ. Նախորդի նման՝ 8 շրջանակի մէջ, որոնց ընդմէջ կայ 3 նկար (տե՛ս վերը):

4. Աղաւթք վասն պահպանութեան որ ամենայն չարք հալածեն - Այլ եւ բարեխաւսութեամբ սուրբ Աստուածածնին եւ Մարիամու Մագդաղենացոյն եւ Մարիամու Յակովբայ...

5. Աղաւթք սուրբ հաւրն Աբրահամու - Աստուած անըսկիզբն, Աստուած անեղ, Աստուած անպարագրելի...

Ծնթ. Սկզբում եւ վերջում ծական տող գրուած է սովորական ձեւով, մնացեալը՝ շեղանկիւն հատումներով, որոնց միջեւ՝ կարմիր կլոր ծաղիկներ՝ 4ական արծաթագոյն տերեւով:

6. Աղաւթք ամենասուրբ Երրորդութեանն - Հոգի Աստուծոյ, սրբեա՛յ զիս, մարմին Քրիստոսի մաքրեա՛յ զիս, ջուր ի կողէն Քրիստոսի լուա՛յ զիս...

7. Աղաւթք հրեշտակաց որ ոչ սուր մերձենային այս (Յնջածի վրայ այլ ձեռքով եւ թանաքով, սեւով՝ «Խաչատուրին») - Գաբրիէլ, Միքայէլ, Ռափայէլ, Դակուէլ, Ադոնիէլ, Բարաբիէլ... եւ ի զաւրութեան քում իրաւ արա՛յ ինձ (Յնջածի վրայ այլ ձեռքով եւ թանաքով՝ «Խաչատուրին»):

8. Այս են անուանք հրեշտակաց, որ պահեն զծառայն Աստուծոյ - Սարսիէլ, Սարաբիէլ, Գուրիէլ, Գանձիէլ, Սեդրաք, Միսաք, Միսայէլ...

9. Գիր վասն ճանապարհի յաջողելոյ - Կենդանամէլ, Կենդանամայէլ, Մաթէ, որ էք սպասաւորք Աստուծոյ...

10. Մաղթանք սուրբ զօրականացն Քրիստոսի Աստուծոյ մերոյ - Բաեխաւ-սութեամբ սուրբ զաւրավարացն եւ զաւրականացն՝ սրբոյն Գէորգեայ զաւրաւարին և Մեռեռիսիոսի...

11. Գիր վասն չար աշիչ եւ չար լեզուի եւ չար նիաթի - Հրանիւթ, Հրափայլ, Համատուն սպասաւորք Աստուծոյ... պատառի եւ խաւար դառնայ ի դէմ ծառայիս Աստուծոյ (Յնջածի վրայ այլ ձեռքով եւ թանաքով՝ «Խաչատուրին»):

Ծնթ. Հետագայ ստացող Խաչատուրն իր անունը գրելուց առաջ նախորդի անունն ամէնուր լուացել է՝ լիովին անընթեռնելի դարձնելով:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Վերջում, կարմրով. Գրեցաւ Կիպրիանոսս թվի ՌժԺԲ. (1663), ի վայելումն (Յնջած անընթեռնելի անունն վրայ՝ «Խաչատուրին»), զոր Տէր Աստուած բարով վայելել տացէ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

Վերջում. Թվին ՌժԺԴ. (1665) գնեցաւ Կիպրիանոսս, որ կոչի Համայիլ, ի պահպանութիւն Սահակ պատանեկին:

Վերջում. Թվին ՌժԺԸ.ին (1669) գրեցաւ յԼստրմբօլ քաղաքին՝ օգնական եւ պահապան ծառային Աստուծոյ Խաչատուրին. ամէն:

3

ՀՄԱՅԻԼ

[Կ. ՊՈԼԻՍՐ]

ՌժԺԶ. - 1667

ԳՐԻԶ՝ Գաբրիէլ ծաղկարար: ՄՏԱՅՈՂ՝ Կարապետ:

ԹԵՐԹ՝ 1 (ժապաւինածեւ): ՆԻԻԹ՝ մագաղաթ: ՄԵՄՈՒԹԻԻՆ՝ 643,5x7,5 սմ: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ բոլորգիր: ԳՈՅՆԵՐ՝ կարմիր, մուգ եւ բաց վարդագոյն, բալագոյն, կոպոյտ, մանուշակագոյն, սպիտակ, կանաչ, երկնագոյն, մուգ եւ բաց դարչնագոյն, նարնջի, սեւ, ոսկեգոյն:

ՄԱՆՐԱՆ ԿԱՐՉՈՒԹԻԻՆ՝ խորանածեւ ճակատագրի (սկզբում).

1. Նահապետք (ծննդաբանութիւն Քրիստոսի). 42 պատկեր, վերջինը՝ Քրիստոս. վերից կամարածեւ՝ քառակուսի շրջանակների մէջ, ձեռքներին՝ գրքեր (կարգում են).

2. (Յրդ բնագրից առաջ) Խաչելութիւն. խաչի վերին թեւից ձախ եւ աջ՝ մարդադէմ արեգակ եւ նորալուսին, Հորիզոնական թեւերից ցած մէկական հրեշտակ ոսկեզօծ գաւաթների մէջ են հաւաքում Քրիստոսի ձեռքերից եւ կո-

ղից թափուող արիւնը, Քրիստոսի ոտքերի արիւնը ծորում է խաչի հիմքում դրուած՝ Ադամի գանգին:

3. Սուրբ, մարգարէք, հայրապետք, թագաւորք, առաքեալք՝ բոլորակների մէջ 10 դիմանկար:

4. Սուրբ Աստուածածին (ամբողջ հասակով, երկնագոյն հէնքի վրայ, ծիրանի զգեստով եւ կապոյտ թիկնոցով):

5. Վեց դիմանկար՝ բոլորակների մէջ, Նարեկացու «Որդի աստուծոյ կենդանոյ» աղօթքի զարդերի միջեւ:

6. Խորհուրդ փրկարար հաղորդութեան. Քրիստոս հաղորդութեան բաժակի մէջ, բաժակի պատուանդանի երկու կողմերում մէկական կարմիր ծաղիկ եւ մէկական հրեշտակ, եւս մի վեցթեւեան հրեշտակ բաժակի հիմքում (ճրգ բնագրի սկզբում):

7. Հրեշտակապետ. զրահաւոր, սրով, ձախ ոտքը գետնատարած մի ծեր մարդու կրծքին, ձախ ձեռքով բռնած մի մանկան մազերից:

8. Սարգիս զօրավար եւ իր որդի Մարտիրոս. ձիաւոր, աջ ձեռքին՝ գուրգ, երկնագոյն հէնքի վրայ:

9. Ներսէս Շնորհալի. հայրապետական գաւազանով, երկնագոյն հէնքի վրայ:

ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմիր. Զարդագիր՝ թռչնային. Սկզբնատողք՝ երկաթագիր, ոսկով:

ՎԻՃԱԿ՝ Բաւարար. սկիզբը եզրամաշ, մասամբ թափուած, առաջին 14 նահապետներից մէկի դիմանկարն ընկած կամ կտրած հանած, նկարների ներկերը եւ լուսապսակների ոսկին տեղ-տեղ թափուած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Աւետարան ըստ Մաթէ[ոսի] - Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի... Եւ ի Դաւթ մինչեւ ի գերութիւնն բաբելացւոց՝ ազգք չորեքտասանք: Եւ ի գերութենէն բաբելացւոց մինչեւ ի Քրիստոս՝ ազգք չորեքտասանք [Ա. 1-14]:

2. Աւետարան ըստ Մաթէ[ոսի] - Եւ ելեալ անտի Յիսուսի, գնաց ի կողմանս Տիւրոսի եւ Սիդոնի... Եւ բժշկեցաւ դուստր նորա ի նմին ժամու [ԺԵ. 21-28]:

3. [Աղերս առ խաչեալն Քրիստոս] - Որ բեւեռեցար ի վերա կենդանարար փայտին, Քրիստոս Աստուած մեր...

4. Մաղթանք առ սուրբ խաչելութիւնն Քրիստոսի Աստուծոյ մերոյ - Թագաւոր հզաւր, ապաւէն ծարաւելոց, փրկիչ նեղելոց...

Ծնթ. Ներածական մասի աւարտը չափածոյ 4 տուն է՝ «Չար իշխանքն խաւարին, / որք ընդ ծառայս քում մարտնչին... զմեզ պահեա՛յ շնորհիւ քոին, / ի գիշերի աղջամղին. ամէն», որին յաջորդում է «բաբելաւսութիւն» սրբոց, մարգարէից, հայրապետաց, թագաւորաց, առաքելոց:

5. Մաղթանք առ սուրբ Աստուածածինն՝ վասն պահպանութեան ծառայոք - Ո՛վ ամենասրբունհի Աստուածածին, պարծա՛նք կուսութեան, ճրա՛գ պայծառ քան զարեգակն...

6. Աղօթք Աբրահամու նահապետի, ասացեալ վասն պահպանութեան ծա-

ուայիս Աստուծոյ (այլ ձեռքով եւ թանաքով, նոտր՝ «Քասպարին եւ Բաղտասարին»): ամէն - եւ էառ Աբրահամ զորդին իւր զԻսահակ եւ տարաւ ի զենլիս իւր... [Հմմտ. Ծն. ԻԲ. 3 եւ Հեռեւ.]:

7. Աղօթք սրբոյն Գրիգորի Նարեկացոյն, ասացեալ ծառայիս Աստուծոյ (այլ ձեռքով եւ թանաքով, նոտր՝ «Քասպարին եւ Բաղտասարին»): ամէն - Որդի աստուծոյ կենդանոյ...

Ծնթ. Շարագրանքը շեղանկիւն հատումներով տերեւագարգերի մէջ:

8. Աղօթք առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս. վասն կենդանարար կողիցն եղիցի բժշկութիւն ծառայիս Աստուծոյ (այլ ձեռքով եւ թանաքով, նոտր՝ «Քասպարին»): ամէն - Հոգի Աստուծոյ, սրբեա՛յ զիս, մարմին Քրիստոսի, մաքրեա՛յ զիս...

9. Մաղթանք առ սուրբ Հրեշտակապետն Գաբրիէլ եւ Միքայէլ եւ ամենայն երկնային զաւրսն. եղիցի պահապան ծառայիտ քո (այլ ձեռքով եւ թանաքով, նոտր՝ «եւ Բաղտասարին»): ամէն - Անսկիզբն Աստուած, Հա՛յր սուրբ, Որդի՛տ միածին, սուրբ Հոգի՛տ ճշմարիտ...

10. Մաղթանք առ սուրբ զօրականսն սրբոյն Սարգսի զօրավարին եւ որդոյ նորա Մարտիրոսին. վասն պահպանութեան ծառայիս. ամէն - Երջանիկ մեծ զօրական եւ Քրիստոսի յաղթող վկայն...

11. Աղօթք տեառն Ներսէսի Հայոց կաթողիկոսի. ասացեալ վասն պահպանութեան ծառայիս Աստուծոյ. ամէն - Հաւատով խոստովանիմ եւ երկիր պաւանեմ...

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Վերջում. Գրեցաւ Կշտապանակս ձեռամբ Գաբրիէլ ծաղկարարի, որ եմ որդի Մարկոս Պատկերահանի, ի թուին ՌՃԺԶ.ին (1667) եւ ի յամսեան Փետրվարի, առուն չորեքշաբաթի, ի վայելումն Կար[ա]պետին*. Աստուած բարով վայելել տացէ. ամէն. Հայր մեր, որ յերկինսդ ես, սուրբ եղիցի անուն քո, եկեացէ՛:

* Ստացողի անունն աւելացուած այլ՝ անվարժ ձեռքով, նոտրողով:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

2րդ բնագրի վերջում, կարմրով. Բարեխաւս ունիմք զխաչելութիւնն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի վասն պահպանութեան ծառայիտ քո (վերջին երեք բառից վեր, այլ ձեռքով եւ թանաքով, նոտր՝ «Քասպարին եւ Բաղդատին»):

4

ՀՄԱՅԻԼ

ԲԱՂԷՇ

ՌՃԼ. - 1681

ԳՐԻՉ՝ Վարդան քհնյ: ՍՏԱՅՈՂ՝ Հռիփսիմէ եւ իր ամուսին Դանիէլ:

ԹԵՐԹ՝ 1 (Ժապաւինաձեւ): ՆԻԻԹ՝ Թուղթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 213,5x7,8 սմ: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միաստիւն. գրադաշտի լայնքը 6,2 սմ, երկու եզրին 7 մմ լայնքի կանաչ սահմանագիծ: ԳԻՐ՝ նոտրգիր: ԳՈՅՆԵՐ՝ կանաչ, կարմիր:

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ.

1. Խաչ. ձուլածեւ կանաչ հէնքի վրայ, կարմրով, հէնքի եզրերին ոճ-զարդեր (Ճրդ բնագրից առաջ):

Խորագիրք եւ սկզբնատառք՝ կարմիր:

ՎԻՃԱԿ՝ սկիզբը եւ վերջը ընկած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. /// մալխալուխ, ապի, ապի, կիրակի, ապիմիշտ, անտի ասիր, դուք որ կա-
րող էք ՀԲ. ազգի լեզուն ի դիմաց Հռիփսիմին (տակը, այլ ձեռքով՝ «Ասպոր») ...
կապեալ եմ զամէն սուրն անաւրինաց, եւս առաւել լեզուն հայի եւ տաճկի, ՀԲ.
միլաթի լեզուն կապած կենայ ի դէմ ծառայիս Աստուծոյ [Դանիէլին, Հռիփսի-
մին]. ամէն:

2. Գիր չար աչից եւ չար լեզուի եւ չար նիաթի - Տէրն մեր Յիսուս Քրիս-
տոս կալաւ զչարախօսքն, չար նիաթովն եւ չար լեզուովն...

3. Որ գողի, որ փարատիչ լինի Աստուծով - Պահի, ահի, շահի, լահի, անտո-
նիահի, ալիխթահի...

4. Գիր վասն չար կախարդաց եւ չար լեզուի եւ չար նիաթի. ընդդէմ ծա-
ռայիս Աստուծոյ Հռիփսիմին - Խափանումն ամենայն դիւական բանի զուգե՛ն
մարդիկ թէ՛ ի գիշերի թէ՛ ի տուընջեան...

5. [Ա]զօթ զաւրաւոր եւ անուանի սուրբ Նշանացս - Եւ Աստուածընկալ
սուրբ Նշանի բարեխօսութեամբ եւ անբարբառ բարեխօսին եւ պատուական
օծեալ արեամբն Քրիստոսի Աստուածընկալ սուրբ Խաչին եւ Վարագայ սուրբ
Նշանին, Պատերազմի սուրբ Նշանին...

Ծնթ. Սուրբ Նշանի տասնմէկ անուն թուարկելուց յետոյ ներբողում է
սուրբ Նշանի յատկանիշները («Չա՛հ փայլուն», «մայր մարմնոց եւ լոյս Բա-
նին» եւ այլն), ապա՝ Աստուածածնին եւ նրա մարմնի մասերը («աստուածա-
շօշափ ձեռն», «աստուածընկալ գիրկ» եւ այլն):

6. Գիր լեզուակապի Աստուծով ի դէմ - Աղաթ, մանիաթ, թուարաթ, պաս-
տիաթ...

7. Մաղթանք սուրբ խաչին - Բարեխօսութեամբ սրբուհոյ Աստուածածնին
եւ սուրբ նշանացս Քրիստոսի անբարբառ բարեխօսացս, սուրբ խաչափայտին
Քրիստոսի...

8. Գիր ծրծացաւի - Ելի ի լեառն Զիթենեաց, աղաչեցի զՏէրն, եւ լուաւ ինձ
Տէր, քաղցրերն յիրար եկին...

9. Սրբոյ Աւետարանս որ ըստ Մարկոսի - Եւ մինչ անցանէր ընդ այն Յի-
սուս, զհետ եղեն նորա կոյրք երկու... իշխանացն դիւաց հանէ դայ զդեւս
[=Մատթ., Թ. 27-34]:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

4րդ բնագրի մէջ եւ վերջում. ...խափանի ի տանէ ծառայիցս Աստուծոյ
Հռիփսիմին եւ իւր այր կոչեցելոյ Դանիէլին... ի դիմաց ծառայիս Աստուծոյ
Դանիէլին, Հռիփսիմին եւ զաւակաց նոցին. ամէն:

Ծնթ. Նոյն բնոյթի յիշատակումներ կամ նաեւ միւս բնագրերի մէջ եւ վեր-
ջում:

Վերջում. Արդ, գրեցաւ Համայնիս ի քաղաքն որ կոչի Բաղէշ, ձեռամբ Վարդան քահանայի, ի վայելումն Հրեկոսիմին, ի թվին ՌձԼ. (1681) ամին. ահա յոյժ պիտանի է Համայնիս ամենայն մարդոյ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

ԺԸ. դ. [Ի գիմաց ծառայիս Աստուծոյ] Կիրակոսին, Ասպորին, Մարիամին, Մալխասին:

Ծնթ. Բոլոր բնագրերի վերջում, երբեմն՝ նաեւ այլ տեղերում բուն ստացողի կամ ստացողների կարմրագիր անունները ջնջուած են՝ մեծ մասամբ անընթեռնելի դարձնելով, եւ վրան գրուած են նորերի այս անունները. «Ասպոր» անունը գրուած է նաեւ «Ասպտոր» ձեւով:

5

ՀՄԱՅԻԼ

ՊՐՈՒՍԱ

ՌՃԿԶ. - 1717

ԳՐԻԶ՝ Նիկողայոս երէց: ՍՏԱՅՈՂ՝ Գրիգոր:

Թերթ՝ 1 (Ժապաւինաձեւ. բաց դարչնագոյն գործուածքէ կշտապանակի մէջ): ՆԻԻԹ՝ Թուղթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 403x7,2 սմ: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին. գրադաշտի լայնքը 5,8 սմ, եզրերին սեւ սահմանագծեր: ԳԻՐ՝ նոտրգիր: ԳՈՅՆԵՐ՝ կարմիր, կանաչ, կապոյտ, դեղին, դարչնագոյն, սեւ:

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻԻՆ.

1. Գրիգոր Նարեկացի:
 2. Աբրահամի զոհաբերութիւնը (ծառի վրայ հրեշտակ եւ խոյ):
 3. Հայր Աստուած, ԺԲ. առաքեալք (չորս շարքով, երեքական ամէն շարքում):
 4. Ս. Գէորգ, սպիտակ ձիով, վիշապն ընդոտնեալ:
 5. Ս. Սարգիս եւ որդին Մարտիրոս՝ սպիտակ ձիով:
 6. Հրեշտակ. աջ ձեռքին սուր, ձախով մազերից բռնած բարձրացրած ունի մերկ մանուկ, կանգնած է մերկամարմին ծերունու վրայ:
 7. Սուրբ, որ կապում է սատանային (ալ):
- Խորագիրք՝ կարմիր: Զարդագիրք՝ երկաթագիր:
- ՎԻՃԱԿ՝ կշտապանակը մաշուած, սկիզբն ընկած, վերջում՝ առաջին ստացողին յիշատակող տողերը կտրած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1. [Աղաւթք Տեառն Ներսէսի Հայոց կաթուղիկոսի - Հաւատով Հոստովանիմ եւ երկիր պազանեմ] /// [ձեռն]ագիր անցանաց իմոց եւ գրեա՛վ անուն իմի դպրութիւնն կենաց եւ. Քննող դադոտնեաց, մեղա քեզ կամա եւ յակամա...
2. Աղօթք սրբոյն Գրիգորի Նարեկացոյն՝ ասացեալ վասն պահպանութեան ամենայն չարէ եւ ամենայն դիւակաւն յորդգայթէ ապրեցո ազատեա երեւելի եւ] աներեւոյթ թշնամոյն պահեա՛ - Որդի՛ Աստուծոյ կենդանոյ, աւրհնեալդ ամենայնի չօրդ...

Ծնթ. Շարադրանքը 7 բոլորակի մէջ է, ազատ մնացած մասերում անարուեստ ծաղկազարդեր:

3. [Աղօթք Աբրահամու նահապետի] - եւ էառ Աբրահամ զորդին իւր Սահակ եւ կամէր զենուլ, եւ ելին ի լեառն...

Ծնթ. Շարադրանքը գրուած է կարմիր եւ սեւ տողերով, շեղանկիւն հատումներով, տողերի միջեւ կանաչով եւ դարչնագոյնով անարուեստ ծաղիկներ:

4. Աղօթք աստուածըն[կալ] խաչին Քրիստոսի եղի[ցի] /// պահապան ծառայիս ///ին - Թագաւոր մեր հօր, ապաւէն մեր, փրկիչ նեղեւոց...

5. Աղօթք սրբոյն Գէորգայ զօրավարին եւ ամենայն երկնային զօրացն. պահեա՛ ծառայս - Բարեխօսութեամբ սրբոյն Գէորգա զօրավարին, Անդրէի զօրավարին, Թէոդորոսի զինաւորին...

6. Աղօթք սրբոյն Սարգսի զօրավարին եւ որդոյ նորա Մարտիրոսն - երջանիկ, մեծ զօրական եւ Քրիստոսի յաղթող վկայն, գլուխ զօրաց Կոստանդիայն...

7. Մաղթանք առ սուրբն Աստուծոյ Գաբրիէլի եւ Միքայէլի եւ ամենայն հրեշտակաց, որ կան սպասաւոր աթոռոյն - Գաբրիէլ, Միքայէլ, Ըմաֆայէլ, Դակուէլ, Միսաէլ...

8. Այլ գիր ալի, Թաղի, որ ոչ մերձենա ծառայիս Աստուծոյ, հալածական եւ կորստական լինի - Տէրն մեր Յիսուս Քրիստոս ելեալ շրջէր եզր Կարմիր ծովուն... անուամբ Տեառն մերո Յիսուսի Քրիստոսի[ի] հալածական լինիմ ի վերայ ծառայս այս անուն՝ Գրիգորին:

Ծնթ. Ստացողի անունը՝ «Գրիգորին», գրուած է գրչի ձեռքով. նախորդ բնագրերի վերջում նրա անունն աւելացուած է այլ ձեռքով. ուրեմն՝ գրիչը գրել է առանց պատուիրատու ունենալու, Գրիգորը գնել է գրչութեան աւարտից անմիջապէս յետոյ, հետագայ ստացողներն էլ նրա անունը ջնջել եւ գրել են իրենց անունները:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

2րդ, 3րդ, 4րդ բնագրերի վերջում. [Ծառայիս Աստուծոյ] Գրիգորին (անունը ջնջած):

Ծնթ. Նման՝ 4րդ բնագրի վերջում, իսկ 6րդի վերջում՝ «Մահտեսի Գրիգորին»:

Վերջում. Գրեցաւ Թվին ՌՃԿԶ. (1717), Մարտի ե., օրն ե..շաբթի, Նիկողոս իրիցու ձեռամբ, Պրուսա:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1ին բնագրի վերջում. ԺԸ. դ. «Մարգարտին»:

6րդ եւ 8րդ բնագրերի վերջում. ԺԹ. դ. [Ծառայիս Աստուծոյ] Մալխասին, Սիմոնին:

Ծնթ. Նման՝ գրեթէ բոլոր բնագրերի վերջում, մեծ մասամբ միայն Մալխասի անունը, հիմնականում սա է ջնջել առաջին ստացող Գրիգորի անունը:

3րդ եւ 5րդ բնագրերի վերջում. ԺԹ. դ. [Ծառայիս Աստուծոյ] մահտեսի Ղարիպջանին

Ծնթ. Նման՝ 4րդ բնագրի վերջում:

6

ՀՄԱՅԻԼ

ՌՃՀԹ. ~ 1730

ԳՐԻԶ՝ Տէր Անդրէաս:

ԹԵՐԹ՝ 1 (Ժապաւինաձեւ): ՆԻԻԹ՝ Թուղթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 132x5,9 սմ: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն. գրադաշտի լայնքը 5,1 սմ, երկու կողմից սեւ եզրագծեր: ԳԻՐ՝ նոսրգիր:

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻԻՆ. նկարներ՝ չունի. Խորագիրք՝ կարմիր:

ՎԻՃԱԿ՝ սկզբից թերի, անկանոն եզրագծով սկսուածքը նորոգած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1. [Հմայանշանք՝ բոլորակի մէջ, կարմրով].

2. Աղօթք սրբոյն Կիպրիանոսի, զոր ասացեալ է վասն դիւաց եւ կախարդաց եւ աղանդաւորաց, որ չմերձենան ծառայիս Աստուծոյ - Ես՝ Կիպրիանոս ծառայ Աստուծոյ եւ Յիսուսի Քրիստոսի, Անտիոքացի, ազգաւ հելենացի...

3. Աղօթք վասն պաշտանութեան՝ Առաքել վարդապետն ասացեալ - Տէր եւ փրկիչ Յիսուս Քրիստոս, Հօր ճառագայթ եւ լոյս փառաց... զայս կեանքս անփորձ պահեա՛յ զսոյ անճառ լուսով քոյ զարդարեայ զծառայս քոյ (տողերի բացթողումներով չափածոյ, ծայրակապ՝ «ՏէՐ ԱՌԱՔԵԱԼ ԱՍԵ»):

4. Աղօթք սրբոյն Գէորգայ զօրավարին վասն չար լեզիվի, չար նազարի, յար նիէթի, չար խորհուրդի, որ ոչ մերձենայ ի ծառայս Աստուծոյ - Հրամանաւն Աստուծոյ սուրբն Գէորգ ելաւ ի տաճարն, ելաւ ի խաչ պատուհանն... եւ զերեք մանկունքն ի հնոցէն եւ զՅովնան ի փոր կիսէն, այսպէս փրկեա՛ եւ ազատեա՛յ յամենայն փորձանաց զծառայն քոյ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Վերջում. Գրեցաւ Կիպրիանոսըս ի Թվին ՌՃՀԹ.ըն (1730), Դեկտեմբերի ամսոյն Դ.ըն, պատկեր աւուրն Զ.շաբաթի, ձեռամբն յոգնայմեղ Տէր Անդրէասիւն, ի վայելոյն ծառայիս Աստուծոյ:

7

ՀՄԱՅԻԼ

ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳԻ ԹԱՂ

ՌՃՁԲ. ~ 1733

ՍՏԱՅՈՂ՝ Մարիամ եւ իր ամուսին Աբրահամ:

ԹԵՐԹ՝ 1 (Ժապաւինաձեւ): ՆԻԻԹ՝ Թուղթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 364x5,1 սմ. գրադաշտի լայնքը 4 սմ, երկու կողմից զոյգ կարմրով սահմանագծուած: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նոսրգիր:

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻԻՆ. նկար չունի. Խորագիրք՝ կարմիր:

ՎԻՃԱԿ՝ սկիզբն ընկած, պաշտանուած մասի սկզբից 20 սմ երկարութեամբ եզրերը մաշուած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. [Գիր ընդգէմ ալի եւ թպղայի] - ///գու պեղծ///գինչ գործով ես, ասա՛ մեզ. ասէ ցնոսա պեղծն՝ ես եմ ալքն չար եւ կարկապ եւ տաժանաւոր, որ երթեալ մտանեմ յարգանդ յղի կանանց...

2. [Անուանք հրեշտակացն] - Զօրութեամբն Աստուծոյ եւ անուամբն սրբոց հրեշտակապետացն, որք են պահապանք ազգի մարդկան, մանաւանդ ծառային Աստուծոյ Մարիամին, Միքայէլի, Գաբրիէլի, Ուրիէլի, Զիթայէլի... եւ հրեշտակք Աստուծոյ հալածեացեն զնոսա ի Մարիամէն. ամէն:

3. Աղօթք եւ կապք վասն թպղաի, դիւաց, ալքի, որ հալածին Աստուծով - Անուն ամենասուրբ Երրորդութեանն եւ Հօր եւ Որդո... ողորմած Աստուած ողորմի եւ պահէ զտղայս սէր Մարիամին եւ Աբրահամին:

4. Պատգամ Մովսէսի մարգարէին վասն հալածման դիւաց - Ալունի խաւով ճարիայ, այս է անուն սուրբ Երրորդութեանն. Ատր, Մատթի, Մատաթիայ...

5. Գիր թպղայի, քաջանց եւ ալքի, որ հալածին Աստուծով եւ ամենայն սրբովք - Սուրբն Պետրոս եւ սուրբն Պօղոս եւ սուրբն Շիղայ գնային առ ճանապարհաւ... որ այլ ոչ ուրէք մերձենալ ի յաղախինն Աստուծոյ ի Մարիամն եւ ոչ ի Աբրահամն. ամէն:

6. Տլիսմ եւ կապք վասն թպղայի, դիւաց եւ քաջանց, որ կապին Աստուծով - Ա. Բ. Գ. Դ. Ե... Բ. եւ Յ. Օ... բարի եղիցի զաւակ Աբրահամին:

Ծնթ. Սկզբում այբուբենի բոլոր գրերը կանոնաւոր կարգով գրուած են թպղայի պատկերի շուրջ, որ ունի եօթ ճաճանչով կամ անկիւնով աստղի տեսքով գլուխ, կենտրոնում մի աչք, տակը՝ «որով կապին դեւք եւ թպղայքն...», թպղայի երկրորդ պատկերի շուրջը միայն ձայնաւոր գրերն են եւ Զ, Պ, Ժ, պատկերի տակ երեքական Լ, Կ, Ի, Ա, Բ, Ե:

7. Գիր եւ աղօթք վասն հալածման թպղաի, դիւաց եւ այսոց չարեաց - Սուրբն Սիսիանոս եւ Ղուկիկանոս գնային եւ իջանէին ի լեռնէ ի վայր, եւ տեսի պեղծ դեւ մի չարատեսակ... արեգակն ի տուէ քեզ մի մեղիցէ, եւ մի լուսինն ի գիշերի:

8. Աղօթք սրբոյն Գրիգորի Ներեկացոյն վասն հալածման այսոց չարեաց - Որդի Աստուծոյ կենդանոյ, օրհնեալդ ամենայնի Հօրդ աշաւորին...

9. [Հմայագիր] - Լալլոյ, լամդայ, սոգայ, գաղգայ, սորակսէ, պէսդոյ, դուսիգայ. Այս ձայնս ասաց ի Գալիլեայ՝ եբրայեցերէ, գաղմատերէն, յունարէն եւ հաստատեցաւ ամենայն գիր արարածոցն Մովսէսի, եւ այսոքիւք հալածին դեւք, ալք եւ քաջք եւ թպղայք ի ծառայիցն Աստուծոյ ի Մարիամէն եւ ի յԱբրահամէն. ամէն:

10. Աղօթք սրբոյ խաչին վասն պահպանութեան ամենայնի չարեաց - Գայր գետն Յորդանանու եւ բերէր ծառ մի գեղեցիկ եւ պատուական... եւ ողորմեայ քո արարածոցդ եւ ինձ՝ բազմամեղիս Մարիամին:

11. Գիր եւ աղօթք վասն զաւակի ապրելոյ. գրեն եւ ի վերան պահեն, ապրի զաւակն Աստուծով եւ ամենայն սրբովք - Սուրբն Սիսի եւ սուրբն Տայիս հրամանաւն Աստուծոյ որս էին ելեալ ընդ սուրբ Յովիէլ հրեշտակի Աստուծոյ... ցո՛յց մեզ, Տէ՛ր, զողորմութիւնս քո եւ զփրկութիւնս քո տո՛ւր մեզ՝ Մարիամին:

12. Գիր որ տղան դիժար ծնանի, գրեն եւ ի յաջ բազուկն կապեն, շուտ ծնանի Աստուծով - Կարմիրն կատրին, կարմիրն կատրին, կար մի է ի ուսոնիայ... եւ արձակել զորդիս Մարիամին:

13. Աղօթք վասն հալածման քաջանց, ալքի եւ թպղայի - Ուղղան քաջ եւ պուլղան, եւ մանուկն բեզոէ էճ...

14. Աղօթք զօրաւոր եւ յաղթող հալածիչ դիւաց Աստուծով եւ ամենայն սրբովք - Երեքանձնեայ սէրութիւն միով բնութեամբ...

15. Աղօթք աւուր չարչարանաց փրչին մերոյ Յիսուսի Քրիստոսի - Հոգի՛ Քրիստոսի, սրբեա՛յ զիս, մարմի՛նն Քրիստոսի, մաքրեա՛յ զիս... կացոյց զիս՝ զՄարիամն եւ հանգոյց զիս երազ երազ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Վերջում. Գրեցաւ Պահանդական գիրս թվին ՌՃՁԲ. (1733), ի թաղն արի եւ քաջ նահատակին եւ մեծ վկային Քրիստոսի սրբոյն Գէորգայ զօրավարին, եւ աւարտ սորին եղեւ Յունիսի Իէ., ի վայելումն աղախնոյն Աստուծոյ Մարիամին. եւ փառք Քրիստոսի յոսոյն մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն:

Ծնթ. Ստացող Մարիամի եւ իր ամուսին Աբրահամի անունները յաճախ յիշատակում են նաեւ բնագրերի շարադրանքի մէջ եւ որպէս կանոն գրուած են կարմրով:

8

ՀՄԱՅԻԼ

ՌՃՂԳ. - 1744

ԳՐԻԶ՝ Ստեփան երէց: ՄՏԱՅՈՂ՝ Թաթոս եւ իր որդի Սիմոն:

ԹԵՐԹ՝ 1 (ժապաւինածեւ): ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 319x9,8 սմ: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն. գրադաշտի լայնքը 7,6 սմ, եզրերը սեւով եզրագծուած, լուսանցները գունաւորած կարմրով: ԳԻՐ՝ նոտրգիր: ԳՈՅՆԵՐ՝ սեւ, կարմիր:

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻԻՆ.

1. Հրեշտակ (սեւով անարուեստ դժանկար): Խորագիրք՝ կարմիր:

ՎԻՃԱԿ՝ սկիզբն ընկած, պահպանուած սկզբի 106 սմ երկայնքը խիստ եզրամաշ՝ թափուած մեծ մասամբ լուսանցները, նոյն մասում խորագրերը գունաթափուած, դժուարընթեռնելի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1. [Գիր կապի] - /// ցին կառավիրն վերայ /// ծովուն խուփի /// կայ կամ շանըն վարաիք չի կայ եւ կամ կատվին հարսնութիւն չի կայ, եւ կամօքն Աստուծոյ կապի չարըն ի դիմայց ծառային Սիմոնին:

2. Աղօթք սուրբ վասն ցաւոց օգտ[ի] - Գայր գետն ի Որանան եւ բերէր ծառ մի գեղեցիկ եւ պատվական... ծառային Աստուծոյ Սիմոնին եւ իր ծնողացն հաւասար. ամէն[ն]:

3. Աղօթք սուրբ Լուսաւորչուն վասն որ այս իցեն ի դիմաց ծառայի - Մընչմակն հերկիկ արաւ, լուծն բողէ (= փոխէ)... ոչ մերձենայք ի ծառայն Աստուծոյ Թաթոսին եւ որդուն Սիմայոնին օգնական եւ պահապան:

4. Աղօթք չար նազարի, չար լեզվի ի դիմաց ծառային ~ Հրանուկ, Հրայփալ, Համայտան, Համայկէզ, Համայգարդ... եւ չոր դառնայ ի դիմաց ծառային Աստուծոյ Թաթոսին եւ որդուն Սիմաոնին. ամէն:

5. Աղօթք օձիկանէ. Գ. օր կարգայ՝ ազատի ~ Տէրն մեր Յիսուսի Քրիստոսի Հրամանաւն սուրբ Գրիգոր Լուսաւորիչն ի Խոր Վերապն ինչաւ... Թաթոսին եւ իր սիրականներ հաւասար:

6. Աղօթք գլխցաւու. ազատի Աստուծոյ ~ Սուրբն Սիոն եւ սուրբն Սիւսիանէ, սուրբն Սափայօթ, բեզ մայրն Օհաննու Մըկըրչին, որ հալածեցին ըզգիւական չար գըլխայցաւն...

7. Աղօթք թաթար քամու է ~ Աթաս աթասի, էաթլուս դուք որ հրեշտակք Աստուծոյ էայկան էն, որ ունիք Հրաման չար խոստուկի, որ է թաթար քամի, ով մաքուր եւ ընտիրք վասն Տեառն աղաչեմք ձեզ հասի՛ք իմտատ որ եւ ազատի պատկեր Աստուծոյ, եղբրուք օգնական եւ պահապան իշողայց ձերոց:

8. [Հմայանշանք՝ խորագրեալք] Աղօթք գլխի վականի. ուրբադ գրէ՛, ջուրն խմցո՛ւր: Այս զուլուծի գրէ՛ օր պահէ:

9. Այս զումրայէ, որ է նու[զ]լայ ~ Խաչեալն մեսիայ խաղաղ պահեսցէ խաչանիշ փա[յ]սէնն, Աստուած էական գործիւ կապէ...

10. Աղօթք գիւսակապ ալքի ~ Աստուածն ողորմեաց մեզ եւ տուր զօրութուն ծառայի քո որպէս եւ կապեաց մեծն Մովսէս գլխաւաւորն...

11. Սայ սօրղուպաթ է, լաւ իմացիր, Գ. օր ջրի վրայ կարգայ, սուրբ կէնայ, է. կամու դեղն սա է ~ Միսմիլլահի, ըռահման, ըռահիմ, սըփանիքէն իրէպ պիմքուլի շէհն... զօուփ կէթ միէսըզ. ամին, ամին, ամին:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Վերջում. Գրեցաւ գիրս ձեռամբն մեղայապարտ եւ անպիտան, նըւազայմիտ, կոյալիտայգիր, խիստ եղկելի, / մեղայ ձեզի, ո՛վ ընտրելիք, / դուք գիտաւ մի համարիք, / ալ իշեցէք մեզ ի բարին, / եւ դուք իշվիք ի երկնային. / Թվին ՌՃՂ Գ. (1744), ըՍտեփան լուկ էրէցս. Հայր մեր որ՛:

9

ՀՄԱՅԻԼ

ՌԲՃԻԲ. ~ 1773ից առաջ

ՄՏԱՅՈՂ՝ Վարդան, որդի Մակարի:

ԹԵՐԹ՝ 1 (ժապաւինաձեւ): ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 583x10,2 սմ: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին. գրադաշտի լայնքը 8,3 սմ, երկու կողմից սեւով սահմանազծուած: ԳԻՐ՝ նոսրգիր: ԳՈՅՆԵՐ՝ կարմիր, վարդագոյն, ոսկեգոյն, կանաչ, երկնագոյն, դարչնագոյն, սեւ:

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ.

1. Ներսէս Շնորհալի (վերին կէսն ընկած):

2. Քառասնօրեայ գալուստն ի տաճար (1ին բնագրի մէջ):

3. Աստուած եւ ԺԲ. առաքեալք:

4. Աստուածածին, կանգնած, մանուկ Յիսուսը գրկին:

5. Փռաբանութիւն խաչի. պարզ խաչ, թեւերի միջեւ փողահար չորս հրեշտակ:

6. Դատաստան. դատաւոր եւ նրա դիմաց կանգնած երեք մարդ (Տրդ բնագրից առաջ):

7. Սուրբ Սարգիս (գուրգ ի ձեռին) եւ իր որդի Մարտիրոս, սպիտակ ձիով (ճրդ բնագրից առաջ):

8. Խաչելութիւն, վերը արեգակ եւ լուսին, վարը՝ երկու Մարիամները (ճրդ բնագրից առաջ):

9. Դատաստան՝ դատաւոր եւ դատուող (12րդ բնագրից առաջ):

Խորագիրք՝ կարմիր:

ՎԻՃԱԿ՝ սկիզբն ընկած (նաեւ՝ Շնորհալու նկարի վերին կէսը): Սկզբում, դարձերեսին քառանկիւն, շրջանակուած պիտակ, վրան՝ «26567 OC/DT»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Աղօթք տեառն Ներսէսի հայրապետի Հայոց կաթողիկոսի ասացեալ - Հաւատով խոստովանիմ եւ երկիր պազանեմ քեզ, Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի...

2. Աղօթք սուրբ Աստուածածինն - Բարեխօսութեամբ սուրբ Աստուածածինն, բարեբանեալ ես, սրբուհի Աստուածածին...

3. Աղօթք հրեշտակաց - Բարեխօսութեամբ սուրբ հրեշտակացն Գաբրիէլի եւ Միքայէլի եւ այլ ամենայն զօրաց...

Ծնթ. Բնագիրը գրուած է չորս սեւագիծ պարզ շրջանակի մէջ, ազատ մնացած տեղերում ծաղկազարդեր:

4. Մաղթանք սուրբ նշանացն Քրիստոսի Աստուծոյ մերոյ - Սուրբ խաչափայտին Քրիստոսի եւ աւագակին, երկնից սուրբ նշանին, Վարազա սուրբ նշանին եւ պատերազմի սուրբ նշանին...

Ծնթ. Նախորդի նման գրուած է հինգ շրջանակի մէջ, որոնց միջեւ կրկին ծաղկազարդեր են:

5. [Հինգ տող հմայագիրք, ապա] Տլսմս այս քաղցրութեան եւ երեսբախտութեան աւագաց եւ պարոնաց. յորժամ դատաստան երթաս՝ այս աղօթն վրա ջրին կարգալ տո՛ւր եւ ջրով լուա՛յ, եւ դատաւորի աջոյ դիհ կանգնէ՛, դատաստանն քո է կամաւն Աստուծոյ, ծառայս Աստուծոյ - Յանուն մեսիայ, որ անուանեցար փրկիչ, Յիսուս Քրիստոս որ վասն մեր կացեր ի դատաստան...

6. [Հմայանշանք՝ 6 տող, 1ինում «Տէր Աստուած Յիսուս Քրիստոս», ապա] Տէր Աստուած այիայ շիրայիայ Յիսուս Քրիստոս Ադոնիայ, Տէր, Տէր Սաբաւաւթ, որպէս Հայր Աստուած առաքումն Որդւոյ քաղցրացաւ...

7. Գիր երեսբախտութեան աւագաց եւ պարոնաց, եւ մեծամեծաց սիրտ քաղցրանայ ի դիմաց ծառայիս Աստուծոյ - Մարտ Մատաթիայ, պիտակէ ալիսակէ, միաչական, փայլական, հրայփային...

8. Աղօթք վասն կապանաց դիւաց եւ կախարդաց եւ աղանդաւորաց, եւ վասն դատաստանի յաջողելոյ եւ վասն քաղցրութեան ծառայիս Աստուծոյ

(այլ գրով՝ «Մակարի որթի Վարթանի») - Թագաւոր Հզօր, ապաւէն ծարաւելոց, փրկիչ նեղելոց...

9. Գիր լեզուակապի. ՀԲ. ազգի լեզու կապի եւ սիրտ քաղցրանայ ի դիմաց ծառայիս Աստուծոյ (այլ գրով՝ «Մակարի որթի Վարթանի») - Քաջ սրբունք, որ ի սարերտ էք, քաջ սրբունք որ ձորերտ էք...

10. Գիր ամենայն միլլաթի. Հար միտքն խափանի, եւ ամենայն ազգ բարին խօսի ծառայիս Աստուծոյ - Անունն Աստուծոյ ասեմ, նուշեմ ի բերանն Հարա-կամաց, եղէգեմ, շաքարեմ ի շրթունքն, մեղրեմ ի բերանն... ի դէմ ծառայիս Աստուծոյ (այլ գրով՝ «Մակարի որթի Վարթանի»):

11. Գիր ճանապարհի. ուր գնայ՝ անահ դառնայ եւ շահաւոր վաճառի, Հան-դիպի ծառայս Աստուծոյ (այլ գրով՝ «Մակարի որթի Վարթանի») - Կենդանամէ, կենդանայմայէլ, մաթէ, որք էք սպասաւորք Աստուծոյ, դուք տարէ՛ք եւ ի բա-րի եւ ի շահաւոր վաճառի Հանդիպեցուցէ՛ք զծառայս Աստուծոյ. ամէն:

12. Այս տլսմս դատաստանի է, պարոնաց եւ իշխանաց մօտ Հարկիս ունե-նան.

Ծնթ. Հմայանշաններ երկու բոլորակի մէջ եւ բացատրութիւններ՝ «Տլսմս ամենայն սուր գլանա եւ ոչ կտրէ զծառայս Աստուծոյ: Որ գայ[ս] Ժ. բանիս ի վերայ պահէ՛ նա սուր ոչ մերձենայ ի ծառայս Աստուծոյ, եւ թէ կռիւ երթայ՝ ամենայն սուր մօմ դառնայ եւ ոչ կտրէ»:

13. Այս աղօթս ում վերայ լինի, ամենայն Հար բան խափանի, եւ ուր գնայ՝ թէ՛ ի ճանապարհ, թէ՛ ի վաճառ, յաջողէ Աստուած (այլ գրով՝ «Մակարի որթի Վարթանի») - Դարձեալ կապեմ զքեզ, սատանայ, ի բանն անծախելի, ի լոյսն անճառելի...

14. Աղօթք պահպանութեան - Գաբրիէլ այր Աստուծոյ եւ պատկեր ասի, Միքայէլ որպէս զԳաբրիէլ եւ Հզօր, Թէբայէլ բժշկութիւն ամենայն ցաւոց... կակուղ եղիցի եւ կապի ամենայն Հար սուր ընդգէմ ծառայիս Աստուծոյ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

5րդ բնագրի վերջում. [ծառայիս Աստուծոյ] Մակարի որթի Վարթանի:

Վերջում, գրչութեան գրից տարբեր ձեւքով. Ի վայելումն Միրզայ որթի Մակարին, որ ուր որթի Վարթան, Սարգիսին Տէր Աստուածըն վայելումըն տա-ցէ. ամէն. Թիվըն ՌԲՃԻԲ.ին (1773), Հոքտեմբերի Ժ.ին:

Ծնթ. Նիւթերի մէջ գրիչը ստացողի անուան տեղը թողել է Հզօրուած, բաց (գրել է պատուիրատու չունենալով), սակայն յետոյ այդ տեղերը մեծ մասամբ չեն լրացուել:

10

ՀՄԱՅԻԼ

1221 - 1772

ԳՐԻԶ՝ տիրացու Օհան:

ԹԵՐԹ՝ 1 (ժապաւինաձեւ): ՆԻԻԹ՝ Թուղթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 49x6 սմ: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին (առանց լուսանցի): ԳԻՐ՝ շղագիր: ԳՈՅՆԵՐ՝ չունի:

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ՝ չունի.

ՎԻՃԱԿ՝ սկիզբն ընկած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. [Աղօթք] - /// ոչ գոյ ինձ /// ամէն: Բարկացուցի գտարմտութիւն եւ զչար առայջի քո արարի, կանգնեցի պատկեր եւ բա[րկա]ցուցի զցասումն անձին իմոյ, ամենակալ... յիշայ ըզմեզ Տէր, յիշայ ըզմեզ յորժամ գաս արքայութեամբ քով եւ ողորմեա մեզ. քարոզ (70 տող):

2. (Բ. երեսին, վերջից առաջ ուղղութեամբ, այլ ձեռքով, հայատառ թուրքերէն, 61 տող) Խօչմայ - Ասլըմ կօչմիշ վաթանըմ տանէ լեմտան վարըյ սախուսլ խաթերճուխըն... տաղընտալմիշ ամսամային պանեչիպմախսսա օլմսն շամպանք անառնօնում///:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Վերջում. Գըրեցայս (գրչի ջնջած 1 բառ) Ղասապկանճ Օվանէսի որդի տիրացու Օհանըյ. ՆՄՄ (1221 + 551 = 1772) սանայ ով որ կարդայ նայ հացմի գըրվեցաւ յապրիլի ին:

11

ՀՄԱՅԻԼ

ԺԶ. Դ.

ՍՏԱՅՈՂ՝ Մեկիտոն:

Թերթ՝ 1 (ժապաւինաձեւ): Նիտի՝ մագաղաթ: ՄեծՈւթիտի՝ 315,5x8 սմ: ԳրՈւթիտի՝ միասիւն. գրադաշտի լայնքը՝ 6 սմ, երկու կողմից զոյգ կարմրով սահմանագծուած: ԳիՐ՝ բոլորգիր: ԳՈՅՆԵՐ՝ կանաչ, կարմիր, դեղին:

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ.

1. Ուղղանկիւն ճակատագարդ (4րդ բնագրից առաջ):

2. Քրիստոս (5րդ բնագրից առաջ, ջնջած՝ եղծած):

3. Ս. Պօղոս եւ Ս. Պետրոս, խաչափայտ (6րդ բնագրից առաջ, եղծած):

Ջարգագիրք՝ հանգուցային: Խորագիրք՝ կարմիր:

ՎԻՃԱԿ՝ սկիզբը եւ վերջը թափուած, սկզբի խորագրերի կարմիրը լուծուած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. [Աղօթք վասն կապանաց դիւաց եւ կախարդաց եւ աղանդաւորաց] - Ջոր կարդան յաւուր կիրակէի եւ յամենայն ժամու, զոր ասացեալ է վասն դիւաց եւ կախարդաց եւ չար աղանդաւորացիս զոր կախարդքն կապեն զորդիս մարդկան, զԲ. զԸ. ՀԲ. (1172) աղանդս կանանց եւ կախարդաց արձակ եւ հեռացեալ եղիցի ի ծառայէն Աստուծոյ պարոն Մեկիտոնէն, Խոցադեղէն, Աստուածատրէն. ամէն, եղիցի, եղիցի:

2. [Աղօթք սրբոյն Կիպրիանոսի, զոր ասացեալ է վասն դիւաց եւ կախարդաց եւ աղանդաւորաց] - Ես՝ Կիպրիանոս, անտիոքացի, ազգաւ հելենացի... եւ հեռաց[եալ] եղիցի պարոն Մեկիտոնէն եւ զաւակաց նորա պարոն Սողրին. ամէն:

3. Աղօթք սրբոյն Յուստիէ կուսին - Յայնժամ կայր ի քաղաքի մեծատան դուստր մի, եւ էր կոյսն գեղեցիկ...

4. [Աղերս] - Տէր Աստուած, յորժամ արարեր զդրախտն յեղեմ ընդ արեւելս եւ հրամանեցեր ելանել Դ. վտակաց գետոց... ի դէմ ծառայիցն Աստուծոյ պարոն Մելիտոնին եւ զաւակաց նորին պարոն Սողորին եւ եղբարցն Խոցադեղին եւ Աստուածատրին, եղիցի, եղիցի. ամէն:

5. Ա[ւրհնութիւն. Գիր կապելոյ] - Թագաւորութիւն Քրիստոսի Աստուծոյ մերոյ դարձեալ կրկին անգամ կապեմ զամենայն հար աչք եւ հար լեզու ի վայելչութիւն Ագամայ ի դրախտին... պահապան եղիցի պարոն Մելիտոնէն եւ ամենայն ընդանեացն եւ զաւակացն. ամէն:

6. [Գիր թպղի եւ հար ալքի] - Սուրբն Պետրոս եւ սուրբն Պաւղոս եւ սուրբն Անոս եւ սուրբն Շիղաթ գնացին առ ճանապարհօն եւ տեսին այր մի նստեալ ի վերայ աւազի...

7. Գիր որ կին դժար ծնանի - Զայս գրէ եւ ձեռն տղացկնի, եւ տղայն շուտ լինի. աքէ, աքա, կաթաւ ասաք...

8. Գիր ջերման. գրէ զայս հրեշտակաց անուանքս եւ մօրու դստեր մանածով ի յաջ բազուկն կապէ եւ Սուքիէլ հրեշտակապետին Ա. աւր պասկացիր - Ասէ Միանոս թող վասն Աստուծոյ պէսպէս Միանոս թող վասն սուրբ կուսին, եհաքթի հարախքան միքան, եփաննա, բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին կապած է ջերմն, որոյ վերայ կենա այս գիրս:

9. Գիր վասն ճանապարհի ասա[ցեալ]/// (թափուած):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

2րդ բնագրի վերջում, նկարի կամ զարդի ջնջած շրջանակի մէջ. ԺԹ. դ. Գասբարին եւ որդոց նորին Մանուկին, Յովանիսին, Փանոսին. ամէն:

3րդ բնագրի մէջ. ԺԹ. դ. ի դէմ ծառայէս Աստուծոյ Շահաբարուն:

3րդ բնագրի վերջում. ԺԹ. դ. [ծառայիցն Աստուծոյ. ամէն] Ումըրօին:

3րդ բնագրի վերջում. ԺԹ. դ. [ծառայիցն Աստուծոյ. ամէն] Մարտիրոսին:

4րդ բնագրի վերջում. ԺԹ. դ. Բժշկութիւն ծառային Աստուծոյ Մարտիրոսին:

5րդ բնագրի վերջում. ԺԹ. դ. Ծառայիս Աստուծոյ Մարտիրոսին:

12
ՀՄԱՅԻԼ

ՌՃԼԶ. - 1687

ԳՐԻՉ՝ Վարդան քհյ Բալուեցի: ՄՏԱՅՈՂ՝ Հէրապետ եւ իր կին Կօզալ:

ԹԵՐԹ՝ 1 (ժապաւինանձեւ): ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 490x8 սմ: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին. գրադաշտի լայնքը՝ 6,3 սմ, երկու կողմից երկգլիծ սեւով սահմանափակուած: ԳԻՐ՝ բոլորգիր: ԳՈՅՆԵՐ՝ կարմիր, կանաչ, երկնագոյն:

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ.

1. Յիսուս Քրիստոս:

2. Մարիամ Աստուածածին, մանուկ Յիսուսը գրկին (4րդ բնագրի սկզբում):

3. Հրեշտակ, կանգնած, բռնած գիրք եւ խաչ(ծրդ բնագրի սկզբում):

4. Սուրբ Սարգիս՝ գուրդ ի ձեռին, ձիաւոր (9րդ բնագրից առաջ):

5. Գրիգոր Նարեկացի (11րդ բնագրից առաջ):

6. Խաչելութիւն:

ՎԻՃԱԿ՝ սկիզբը եւ վերջը թափուած, խոնաւութիւնից ծայրէծայր մուգ բծեր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Պաղատանք առ անունն Յիսուսի ~ Հայր երկնաւոր Աստուած, ողորմեա՛ց մեզ, Որդի փրկիչ ամենայն աշխարհի Աստուած ող՛, սուրբ Երրորդութիւն մի Աստուած ողը՛, Յիսուս Որդի Աստուծոյ կենդանոյ ողը՛... ի ծառայէսք ի Հրապետէն. ամէն. եւ փրկեա՛ ի Հար պատահմանց եւ յամենայն անօրէնութենէ:

2. Գիր Հար նիաթի եւ Հար աչից ~ Յանուն Աստուծոյ ես գրեմ յայն սրբոց անունն, որ ի վերայ լերանց կան, է. թեւ ունին, է. թեւն է. գոյն ունին... զծառայսք զայս անուն՝ Հերապետն, զկին, յերեւելի եւ յաներեւոյթ թշնամոյն. ամէն:

3. Գիր գլխացաւութեան ~ Տէրն մեր Յիսուս Քրիստոս յորժամ եկն ի Գալիլիա, ի Յորդանան, մկրտիլ ի Յովհաննէ... նոյնպէս արա՛ բշխութիւն Հէրապետին. ամէն:

4. Պաղատանք որ եւ մաղթանք սրբունոյ կուսին Մարիամու ~ Ո՛վ սրբունհի Մարիամ Աստուածածին, աղօթեա՛ վասն մեր, սրբունհի կոյս կուսանաց, ա[ղօթեա]... բարեխօսեա՛ վասն ծառայիս Աստուծոյ այս անուն Հէրապետին եւ փրկեա՛ ի գլխացաւութենէ եւ ի Հար պատահմանց. ամէն:

5. Գիր երեսբախտութեան եւ քաղցր եւ անուշ լինել առաջի թագաւորաց եւ դատաւորաց եւ ՀԲ. միլաթի՝ ծառայէս Աստուծոյ Հերապետէն ~ Յանուն մեսիայ, որ անուանեցաւ Քրիստոս, որ վասն մեր եկաց ի դատաստան... ի դէմ ծառայիս Աստուծոյ Հէրապետին. ամէն:

6. Յիշումն ամենայն երկնայնոց հրեշտակաց, որ լինին պահապան ծառայիս Աստուծոյ այս անուն՝ Հէրապետին ~ Յանուն սրբոց հրեշտակացն Գաբրիէլի եւ Միքայէլի, եւ Հռափայէլի, Բարաքիէլի եւ իննեակ դասակարգութեանց... պահեն զՀէրապետն եւ ի յորդայթիցն սատանայի եւ ի Հար մարդոց. ամէն:

7. Գիր կապի արձակման ~ Աստուած արձակեցաւ ի վերայ լուսոյն, լոյսն արձակեցաւ ի վերայ աւդոյն... ամենայն կապք եւ կախարդութիւնք արձակեալ լիցին ի ծառայէս Աստուծոյ Հէրապետէն. ամէն:

8. Գիր Հար նիաթի եւ Հար աչից ~ Այս են հրեշտակաց անուանքն, որ կապեն զՀար դեւսն եւ զՀար նիաթովսն. Հրանիւթ, Հրափայլ... ի դէմ ծառայիս Աստուծոյ Հէրապետէն. ամէն:

9. Միջնորդ եւ բարեխօս առնել զսուրբն Սարգիս եւ զորդին նորա զՄարտիրոսն, եւ զսուրբն Գէորգ զօրավարն եւ զայլ սուրբ զինուորսն ամենայն ~ Յանուն սուրբ Սարգսի զօրավարին եւ որդւոյ նորա Մարտիրոսին, եւ սուրբ Գէորգեա զօրավարին...ծառային քում այս անուն՝ Հէրապետին, Կօզալին եւ ազատեա՛յ յամենայն փորձութեանցն սատանայի. ամէն:

10. Գիր թպլի, սրավախի, գլխացալի - Յանուն Հօր եւ Որդւոյն եւ սուրբ Հոգւոյն. ծառ մի կայր ի մէջ տի[եզ]երաց... մերձենալ ի ծառայս Աստուծոյ Հէրապետին, կնոջն՝ Կողալին, այլ հալա[ծա]կան լիցիս. ամէն:

11. Աղօթք սրբոյն Գրիգորի Նարեկացոյն - Աստուած յաւիտենական, բարերար եւ ամենակալ, ստեղծի[չ] լուսոյ եւ յօրինիչ գիշերոյ... ողորմեա՛ ծառային քո Հէրապետին, կնոջն՝ Կողալին եւ փրկեա՛ յամենայն գիշերային պատահմանց. ամէն:

12. Մտածութիւնք գրավականք յաղաքս Հարչարանացն Քրիստոսի - Ո՛վ Տէր Յիսուս Քրիստոս, երկիր պապանեմք քեզ ի խաչին կախեալ... ողորմեա՛ Հոգւոյ ծառային քո եւ վերացո՛յ զծառայս քո ի կեանս մշտնջենականս:

13. [Աղօթք զաւրաւոր եւ անուանի Սուրբ Նշանացն] - Եւ աստուածընկալ սուրբ Նշանացն բարեխօսութեամբն եւ անբարբառ բարեխօսացն, եւ պատուական օծեալ արեամբն Քրիստոսի, եւ աստուածընկալ սուրբ խաչին, եւ Վարազայ սուրբ նշանին... եւ պատկերին Քրիստոսի որ ի դաստառակին:

14. Բ. երեսին, վերջում. Աղօթք խոլնճրէ, յառաջ սեղանսն ասա. դատ արա՛ ինձ իմ եւ քաւ[եա] ինձ ի [դա]տաստանի - Յանուն [Յիսուսի] Քրիստոսի, յամբար, զամբար, փարուարտիկար, սխիտիմար, կաշիճ, պայազկէ... ծառայի Աստուծոյ Հէրապ[եա]ին եւ իւր զաւակացն եւ իւր կնոջն բարխօ[ս]:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

11րդ բնագրից յետոյ. Գրեցաւ Համայնիս ձեռամբ Վարդան քահանայի Բալուեցոյ, ի թվին ՌՃԼԶ.ին (1687), ի վայելումն այս անուն՝ Հէրապետին, կնոջն՝ Կողալին եւ իւրեանց զաւակացն. ամէն:

Տե՛ս նաեւ բնագրերի վերջնատողերը. ստացողի անունը երբեմն յիշատակուած է նաեւ բնագրերի մէջ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1ին բնագրի մէջ, երկիցս. ԺԹ. դ. «Նուբարին» (նոյնը՝ 2րդ, 3րդ եւ յաջորդ բնագրերի վերջում, առանց, սակայն, առաջին ստացողի անունը ջնջելու կամ եղծելու):

13

ՀՄԱՅԻԼ

ԺԷ. դ. Բ. կէս

ԳՐԻԶ [Վարդան քհյ Բալուեցի]: ՍՏԱՅՈՂ՝ Հրեղէն եւ իր ամուսին խօջա Արապչահ:

ԹԵՐԹ՝ 1 (ժապաւինաձեւ): ՆԻԻԹ՝ Թուղթ: ՄԵՄՈՒԹԻԻՆ՝ 171x7,8 սմ. գրադաշտի լայնքը 5,9 սմ, երկու կողմից կարմրով սահմանազծուած, լուսանցները կանաչով գունաւորած: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ բոլորգիր: ԳՈՅՆԵՐ՝ կարմիր, կանաչ, երկնագոյն:

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ.

1. Հրեշտակ, խաչագլուխ նիզակով խոցել է ցածուած նկարուած վիշապին:

2. Ս. Սարգիս՝ գուրգույ, ձիաւոր, եւ իր որդի Մարտիրոս (3րդ բնագրի սկզբում):

ՎԻՃԱԿ՝ սկիզբը թափուած:

Ծնթ. Այս եւ նախորդ՝ թիւ 12 հմայիլները գրչութիւնը, նկարները եւ յարգարանքը լիովին նոյնական են, ըստ այդմ եւ սրա գրիչ համարել ենք Վարդան քհյ Բալուեցուն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Յիշումն ամենայն երկնայնոց հրեշտակաց - Յիշեա՛ զսուրբ հրեշտակսն Աստուծոյ, որ են պահապանք որդոց մարդկան. Գ Գաբրիէլ, Վ Միքայէլ... եւ ոչ այլ ինչ որդեայթ լիցին ծառայիս Աստուծոյ Հրեղինին, այլ հաւածական եղիցին ի յԱրափշիցն եւ իւր կողացէն Հրեղինէն, իբրեւ զվէմ անշարժ եղիցին. ամէն:

2. Գիր չար նիաթի - Յանուն սրբոց հրեշտակացն, որ պահեն զչար նիաթովսն, Հրանիւթ, Հրափայլ, Հրայտան... ծառայիս Աստուծոյ Հրեղինին... թէ շատ ըմպել տաս, թէ զքունն հատանես:

3. Բարեխօսութեամբ սրբոց զօրավարացն - Յանուն սրբոցն՝ սուրբ Սարգսին եւ որդւոյն նորա Մարտիրոսին, եւ Գէորգեա զօրավարին, եւ Վարդանա զօրավարին... ծառային քո Հրեղինին... ներքո եւ արտաքոյ պատահարաց ի ձեռն զգալութեանց:

4. Գիր բժշկարար ծառայիս Աստուծոյ [Հրեղինի] - Գայր անկար ի ծովէն ելանէր որպէս զցուլ, գոչէր որպէս զառիւծ... եւ զայս ծառայիս Աստուծոյ խօջա Արապշին, կնոջն՝ Հրեղինին. ամէն եւ ամէն:

5. (Բ. երեսին, վերջում) Գիր զոլնջի, յառաջի սղ՛ - Դատ արա՛ ինձ, Աստուած իմ եւ՛, յանուն Յիսուսի Քրիստոսի. յամքար, փարւատիկար... Քրիստոս գու բժշկեա՛ զցաւ եւ զխոլինձ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Վերջում. Գրեցաւ Համայիլս ի վայելումն Հրեղինին եւ իւրկան Արապշին. Աստուած բարով վայելել տացէ նոցա. ամէն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1ին բնագրի վերջում, ԺԸ. դ. «պատ Մարամեն, Ասուրին». ապա՝ «Ապտորից, Մարամին. ամէն»:

2րդ բնագրի մէջ, բուն ստացողի անուան վերը. «Ապտորին», 3րդ բնագրի մէջ՝ «Ասպուրին», «Ասպատուրին, Մարամին. ամէն»:

4րդ բնագրի խորագրի մէջ եւ վերջում. «Մարիամին, Ասպատորին»:

1ին բնագրի խորագրից առաջ եւ 4րդ բնագրի խորագրում, ԺԸ. դ. «Կիրակոսին»:

Բ. երեսի բնագրից առաջ, նոտրաշղագիր. Այս Համայիլս ծառայիս Աստուծոյ Տէր Յակոբին է Բախսեայ, իւր եղբ[այր] Ամիրջանին, որդուն Մինասին, յիշատակ է /// հոգուն. ամէն: Բարով վայելէ... (մաղթանք՝ դժուարընթեռնելի):

14
ՀՄԱՅԻԼ

ԺԸ. դ.

ՍՏԱՅՈՂ՝ Յովսէփ, Անթառամ:

ԹԵՐԹ՝ 1 (Ժապաւինաձեւ): ՆԻԻԹ՝ Թուղթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 234,5x9,2 սմ: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն. գրադաշտի լայնքը 8 սմ, երկու կողմից սեւով սահմանազծուած: ԳԻՐ՝ նոտրգիր:

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻԻՆ՝ չունի: Խորագիրք՝ կարմիր: ՎԻՃԱԿ՝ սկիզբը եւ վերջը թափուած, ծայրէծայր եզրամաշ՝ բնագիրը երբեմն վնասուած, կեղտոտուած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1. [Հմայագիրք] - ///ալածին/// թղայք զօրութեամբ/// ոյ ի ծառայիս անդաւրամն [Հմայագրերի աղիւսակ] ԼԼԼ ԿԿԿ ԻԻԻ / ԱԱԱ ԵԵԵ ԵԵԵ: Որպէս կարեցեր զծովն բանիւ Հռամանաւ քուլ... սատանաք եւ [չար] աչք, ալք ոչ մերձեցին ի ծառայս Աստուծոյ Ուսէփն:

2. Պատգամ Մովսէսի սուրբ մարգարէյին - Ալունի խալ ճիեա՝ այս է անուն սուրբ Երրորթութեանն Ատրմատիւ, Մատաթիեայ, Անգինակին, Սարսինակին, Աբրատրին... որ յալ ոչ կարէնաք մեռձենալ որո վերա գիրս լինի, մանաւանդ ծառայս Աստուծոյ:

3. Երանեալ է յայր որ երկնչէ ի Տեարնէ, զպատլրանիս նորա նայ կամի յոժ... (շարադրանքի մէջ խաջանշաններ):

4. Աղոթք Երրորթութեանն, զոր ալուր եւ աղթող է Հալածիչ եւ այսոց չարեաց - Երեքանձնեայ աղթութիւնք անքննն միով բնութեանն եւ էյութիւնն անքնին... աւիտեաց աւիտէնից. ամէն. ծառայիս Աստուծոյ Ուսէփն, Անդաւրամն:

5. Այլ պահպանութիւն դիվաց, որով Հալածին Աստուծոյով վասին դպղայի դիվաց - Սուրբն Ղուկաս եւ սուրբ Հայրատին Բուկաս եւ սուրբ Անդրաս որս էյին ելեալ ի լերինս... չունիս իշխանութիւն մերձենալ կամ կորուսանել զտղայս աղախնուս Աստուծոյ Ուսեպին:

6. [Աղերս] - Տո՛ւր ծառայիք քո, կեցո՛ւ զորդի աղախնո քոք... օգնեցեր ինձ եւ միխիթարեցեր զիս:

7. Այս է. բանքս որ ասաց Յիսուս ի Քալիլեայ - Ըեալդայ, րամդայ, սուլդայ, գաթա, սարէքսէ, դէսդայ... եղիցի բժշկութիւն ծառայիս Աստուծոյ Անդաւրամն. ամէն:

8. Այս են անուանք բաժին քաջանց - Յովիէլ, Հրայգինես, Տաղինես, Ակնիլէս, Վիայս... Հրամանաւն Աստուծոյ Իսէպին որդոցն:

9. Որպէս զի մեծ են քործք քո Տէր, յոժ մեծ են խորուրդ քո (խաջանշան): Ոչ երկիցեցես դու երկուղէ գիշերի եւ ոչ ի նէսէ, որ թուջի ի սէպէ:

10. Յուզ [=Տուր^Ը] մեզ Տէր զուղորմութիւնս քո եւ զփրկութիւնս քո տո՛ւր մեզ. այս է Գ. տուն սաղմոս ծածուկ քործք սմա կին որ թիժար ծնանի, գիրէ, աջ բազուկին կապէ կամ ձեռին դիր, շուտով ծնանի Աստուծով. ամէն - Կարմի-

րեն կատիրին, կարմիր կաթրին... փութացէ՛ք զծնունդս աղախնուս Աստուծոյ Անդարամն:

11. Լսել հեծութիւն կապելուց եւ արձակել զորդիս - Անդիմոս եւ Բաքոս, Առմիլուս, Առալուս... զի երեւեսցի պատկեր նորածին մարդուն:

12. Աղօթք պահպանութեան գիշերային յայտոց պիղծ չարեաց. զարմանալի աղօթք է եւ լիթիցի պահապան ծառայիս Աստուծոյ - Աղաչեմ զքեզ, Տէր Աստուած մեր, եւ գոհանամ զան[հ]աս մարդասիրութենէ... պահեա՛յ Տէր Աստուած զծառայս քո Ուսեպն, Անդարամն... որով մախթանոք եւ բարէխաւսութեամբ մեծին Միխիթարայ վարդապետին եւ Գիրիգորի Ներեկացուն եւ Յոհանէս Գառնեցուն սուրբ ճգնաւորին Տէր Աստուած Յիսուս Քրիստոս Հալածեցին յալին եւ թպղան դեւք եւ քաջք յայլ ոչ մեռձենան ծառայիս Աստուծոյ Ուսէփին, Անդարամն:

13. Արեկակին ի տեւէ քեզ մի՛ նեղեցի եւ լուսին ի գիշերի - Տեր պահեցէ զքեզ ամենայնաբէ, պահեցէ Տէր զանձն քո...

14. Պատգամիս Մուսեսի սուրբ մարգարէյին - Ալունա համան հաւու ճառեայ մահայ իմամբայ... հալածին ալք եւ թպղայք ի ծառայիս Աստուծոյ:

15. Զայս պահպանութեան ԳՃԿԵ. (365) ցաւոց դեղ է - Սուրբն Սիսիանոս գնար եւ իշանէր ի լերնէն վայր, տեսանէր պիղծ թեւ մի... ծառայիս ստուծոյ Իսէպին, Անդարամն... եւ ոչ կորուսամնէմ զմանուկին Անդարամն... ոչ կարացին մերձենալ ծառայիս Աստուծոյ Ուսէփին, Անդարամն:

16. Աղօթք սուրբ խաչին եղեցի պահապան ծառայիս Աստուծոյ - Գայր գեա Որդանանու, բերէր ծառ մի գեղեցիկ եւ պատվական եւ եր գետին ծառին յան խաչանման սերորէք եւ քերորէք կային շուրջ զնուաւ, բարձրայծայն աղաղակէին եւ ասէին. Սուրբ, սուրբ, սուրբ, Տէր զսրբութեանց լի էն երկինք եւ երկիր, փարսք եւ տունք ամենայն/// (թափուած):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Տե՛ս բնագրերի վերջնատողերը:

15

ՀՄԱՅԻԼ

ԺԸ. Գ.

ԹԵՐԹ՝ 1 (ժապաւինածեւ): ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 334x8,4 սմ: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն. գրադաշտի լայնքը 6,8 սմ, երկու կողմից զոյգ սեւով եզրագծուած: ԳԻՐ՝ նոտրգիր: ԳՈՅՆԵՐ՝ կարմիր, նարնջագոյն, կանաչ, սեւ:

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻԻՆ.

1. «Յիսուս [Քրիստոս]» եւ ԺԲ. առաքեալք. կողք-կողքի երկուական եւ վեց շարքով, առաջին երեք շարքից յետոյ՝ շրջանակի մէջ, «Գառն յԱստուծոյ», առաջին վեցից մնացել է երկուսի պատկերը եւ յաջորդ երկուսի գլուխները:

2. Աբրահամի զոհաբերութիւնը. «Աբրահամ», «Սահակ», հրեշտակ եւ խոյ ի ծառին:

3. Աստուածածին մանուկ Յիսուսի:

4. Թագաւոր երկնաւոր (7րդ բնագրի մէջ):
5. Ստեփանոս Նախավկայ (7րդ բնագրի մէջ):
6. Գրիգոր Լուսաւորիչ (7րդ բնագրի մէջ):
7. «Սուրբ Սարգիս». սպիտակ ձիով, ձեռքին գուրգ:
8. «Սուրբ Պէտրոս», սպիտակ ձիաւոր, նիզակով խոցում է վիշապին:
9. «Սուրբ Պօղոս» կապէ զսատանայ (զալքն):

ՎԻՃԱԿ՝ սկիզբը մաշուած, առաջին մանրանկարի տարբեր մասեր թափուած, հետագայ անարուեստ նորոգումով եղածն ամրացուած, վերջը թափուած, խոնաւութիւն տեսած եւ կեղտոտուած, 9րդ բնագիրը մանուշակագոյն թանաքով կեղտոտուած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Սրբոյ Աւետարանիս որ ըս[ա] Մաթէոսի. ասէ՝ Ամէն - Եւ յամենայն կողմն Գալիլեայցաց յուսուցանէր ի ժողովուրդն... Եւ անկուս Յորդաննու բժշկեաց ի Տէր. ամէն [Հմմտ. Դ. 23-25]:

2. Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի - Եւ ելեալ անտի գնաց ի քաղաքն Գալիլիայ... Եւ զարմանային յամենեքեան ի Տէր. յամէն [Հմմտ. Զ. 1-5, Յովհ. Բ. 1-13]:

3. Սրբոյ Աւետարանիս Ղուկասու - Եւ ելեալ ի միւսանգամ ի սահմանացն Տիւրոսի... Եւ լուծան կապանք լեզուի. եւ խաւսէր յուղղ՝ [Է. 31-35]:

4. Սրբոյ Աւետարանիս Օհաննու - Եւ եղեւ ի վաղիւն մինչդեռ իջանէին նոքա... Եւ մինչ դեռ մատչեար, զարկոց դիւն եւ հանեց ծառայիս Աստուծոյ. ամէն [Թ. 37-42]:

5. [Աղօթք Աբրահամու նահապետի] - Եւ առեալ յԱբրահամ զորդին իւր ՍՀակ եւ տարաւ զենելիս իւր... Եւ Սահակ ծերացեալ ալերուք ի Տէր:

6. [Անուանք Սրբոց Նշանացն] - Բարէխաւսութեամբ աստուածային սուրբ նշանացն Քրիստոսի Աստուծոյ... Մուտայ Սուրբ Նշանն, ըՄքանչելայ Սուրբ Նշանն, Տէրունական Սուրբ Նշանն ծառայիս Աստուծոյ. ամէն:

Ծնթ. 5րդ եւ 6րդ բնագրերն իրար հիւսուած՝ շեղանկիւն հաստումներով, որոնց միջեւ կան կլոր ծաղկազարդեր:

7. [Մաղթանք սուրբ Աստուածածնին] - Աստուածածին ամէնյաւրհնեալ, զպաղատանն ընկա՛լ, ի հանգըստեան ժամոյս հասեալ առ քեզ... բարեխօսեա՛յ ամենայն ցեղ ցաւոց ծառայիս Աստուծոյ:

Ծնթ. Բնագիրը չորս բոլորակի մէջ, որոնք մէջընդմիջուած են նոյնպէս բոլորակների մէջ գտնուող նկարներով:

8. Աղօթք սրբոյ Սարգսի զորաւկարին, զոր ազատելոց. ամէն - Երջանիկ մեծ զորական եւ յաղթող վկայն... քաջ սպառազէն սուրբա Սարգիս:

9. Աղօթք գլխայցաւի ասէ - Գայր գետըն Իորդանն եւ բերէր ծառ մի գեղեցիկ եւ պատուական... Հարապետաց եւ ճգնաւորաց եւ կուսան[աց եւ] ամենայն սրբոց քոց երկնաւոր:

10. Աղօթք ջերմի եւ դէնտի՝ գնայ, ասէ - Բարէխաւսութեամբ սուրբ զօրաւ-

վարացրն սրբոյ Գէորգա զօրավարին եւ Մեռիկեռիոյի զինավորին... ամենայն փորձանաց ծառայիս յԱստուծոյ օգնական եւ պահապան. յամէն:

11. Աղոթք Հար նազարի եւ Հար լեզուի - Տէր Աստուած մարդասէրի Հօր Որդի, դու ես պահապան... ծառայիս յԱստուծոյ օգնական եւ պահապան, զօր յազատելս ամենայն սատանակ[ա]ն փորձանաց բարէխաւսե Աստուծոյ ի Տէր. յամէն:

Ծնթ. Յաջորդող նկարից յետոյ՝ թափուած:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Ծնթ. Բնագրերի խորագրերի եւ վերջնատողերի մէջ ստացողի անուան տեղն ամէնուր թողնուած է բաց՝ չգրուած, որ յետոյ երբեւէ չի լրացուել:

16

ՀՄԱՅԻԼ

ՌՃՀ. - 1721

ՍՏԱՅՈՂ՝ Կարապետ:

Թեթ 1 (ժապաւինաձեւ): Նիիթ՝ Թուղթ: ՄեծՈւթիին՝ 923x7,3 սմ. գրա-դաշտի լայնքը 5,7 սմ, երկու կողմից չորս՝ կարմիր, դեղնականաչ եւ զոյգ կարմիրով սաՀմանագծուած: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտրգիր: ԳՈՅՆԵՐ՝ կարմիր, վարդագոյն, կանաչ, դեղին, մոխրագոյն, սեւ:

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻԻՆ.

1. Աստուածածին (թագակիր) եւ Յիսուս (պատանեակ):
 2. Ներսէս Շնորհալի:
 3. Քրիստոս՝ Դատաւոր արդար, թագով, բազմած գահաւորակին (3րդ բնագրի մէջ):
 4. Գրիգոր Նարեկացի:
 5. Կիւրիանոս Հայրապետ:
 6. Երկու հրեշտակ՝ սրագէն (ճրդ բնագրի վերջում):
- Զարդագիրք՝ երկթագիր եւ թռչնային: Սկզբնատողք՝ կարմիր:
ՎիճԱԿ՝ սկիզբը թափուած, եզրամաշ, թեթեւ մաշուածնքեր ունի նաեւ շա-րունակութեան մէջ, վերջի՝ 30 սմ երկայնքով կտորը պոկուած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1. [Աղոթք սուրբ խաչին] - Արդ, սուրբ խաչն մեզ նշան աղթութեան եւ դիւացն խորտակիչ, սուրբ խաչն մեզ վահան եւ դիւացն հալածիչ... եւ եղիցի պահպանութիւն ծառայիս Աստուծոյ (այլ, աւելի ուշ ձեռքով՝ «Կարապետին»): ամէն եւ ամենայն ժամ:

Ծնթ. Բնագիրը գրուած է շեղանկին հատումներով, որոնց միջեւ կան պարզ ծաղկազարդեր: Կայ ստացողի անունը գրելու համար չգրուած թողած եւս մի տեղ, որ Կարապետը չի լրացրել:

2. [Աղերս առ սուրբ Աստուածածինն] - Ակն արեւուն եւ աթոռ կառաց Աստուծոյ Մարիամ, ակն պատուական կոչեցեալդ աստուածավայելուչ պատիւ մեծարանաց... եւ ամենայն սրբոցն պահեա՝ Տէր Աստուած զծառայս քո [Կա-րապետն]. ամէն:

Ծնթ. «Կարապետն» անունը ջնջած եւ Ի. դ. կէսերի գրով, մանուշակագոյն թանաքով գրած՝ «Պեղ. Առաքելին»:

3. [Ներսիսի Շնորհալույ Աղօթք Համօրէն Հաւատացելոց] – Հաւատով խոստովանիմ եւ երկիր պապանեմ... սուրբ Երրորդութեանդ յաւիտեանս. ամէն, եւ եղիցի պապանութիւն ծառայիս Աստուծոյ (Ի. դ. գրով, մատիտով՝ «Արմենակին»): ամէն

Ծնթ. «Անեղ բնութիւն մեղ[ա] քեզ մտօք իմովք... լուացից զմեզս յանձին իմոյ առաջ քան զելանելն իմ յաշխարհէս եւ ողորմեա քո» մասը գրուած է 12 բոլորակի մէջ, որոնցից ճրդից յետոյ կայ չգրուած եւս մի բոլորակ՝ նախատեսուած նկարի՞ Համար: Վերնագրից բացի, չլրացուած է թողել նաեւ Հատուածների սկզբնատառերը:

4. Աղօթք սրբոյն Գրիգորի Նարեկացոյն վասն բժշկութեան եւ պապանութեան եղիցի Հաւատով մերձեց[եալ] – Արդ, ես՝ ծնունդս մեղաց, որդիս մահացու երկանաց, արդարեւ անսահման բիւրոց քանքարաց տուժից... մերձեցող ծառայից Աստուծոյ (Ի. դ. գրով, մատիտով՝ «Արմենակին»): Աստ եթէ կամիս՝ ասա՝ վասն Հիւանդաց եւ ամենայն վշտացելոց քարոզն փարատեա՝ զցաւս եւ բժշկեա՝ զՀիւանդս: Աստ իմացի՛ր, որ այս վերի աղօթս վասն ամենայն ցաւոց եւ այլ նեղութեանց պապանութեան է:

5. Աղօթք սրբոյն Կիպրիանոսի Հայրապետին, զոր արարեալ ընդդէմ ամենայն աղանդաւորաց, որք կապեն չարհն կապանօք զորդիս մարդկան. ՌՃՀ.ի (1721) – ես՝ Կիպրիանոս, ծառայ Աստուծոյ բարձրելոյն, Անտիոքացի եւ առն Հեթանոսի որդի, ազգաւ հելլենացի, անուն հօր իմոյ Եղեսպայ, եւ մօր իմոյ՝ Կըղօգիւ... պապող ծառայէս Աստուծոյ [Կարապետին] (ջնջած եւ Ի. դ. կէսերի գրով, մանուշակագոյն թանաքով գրած՝ «Պեղ[նակեան] Առաքելին»)... ի ծառայէն Աստուծոյ Կարապետին... ընդդէմ ամենայն քրիստոնէից Հաւատով մերձեցողացն ի սա, մանաւանդ ի պապող ծառայէս Աստուծոյ [Կարապետին] (ջնջած եւ Ի. դ. կէսերի գրով, մանուշակագոյն թանաքով գրած՝ «Պեղ[նակեան] Առաքելին»):

6. Գիր պապանութեան եւ նախախնամութեանն Աստուծոյ՝ ընդդէմ չար լեզուի եւ սրի եւ Հիւանդաց եւ շատ օգուտ եւ կապելոյն – Արդար Աստուած, բարերար Աստուած, գերազոյն Աստուած, դատաւոր Աստուած... Հաւատով ընտանօղ ծառայիցս Աստուծոյ [Կարապետին] (ջնջած եւ Ի. դ. կէսերի գրով, մանուշակագոյն թանաքով գրած՝ «Պեղ[նակեան] Առաքելին»)... օգնեցեր ինձ եւ մխիթարեց[եր] ինձ՝ զծառայ [Կարապետին] (ջնջած եւ Ի. դ. կէսերի գրով, մանուշակագոյն թանաքով գրած՝ «Պեղ[նակեան] Առաքելին»): ամէն:

7. Այս է Ուրբաթագիրք կամ ի չորէքշափտի, զոր տանեն զՀիւանդն ի դուռն եկեղեցոյն եւ ասեն զհարց Սաղմոսըն մինչեւ զգործատունն եւ ապա ԺԲ. Տէր որորմե[ա]՝ եւ ապա կարդան, այլ եւ ոգնէ շատ ցաւոց եւ նեղ[ութեանց] – Կարդամք առ քեզ, Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Տէ՛ր զօրութեանց, որ զգազանն կապեցեր... մանաւանդ ի ծառայէ Աստուծոյ [Կարապետին] (ջնջած եւ Ի. դ. կէսերի գրով, մանուշակագոյն թանաքով գրած՝ «Առաքելին»)... Հաւատով մերձեցող Հաւատացեալքն, մանաւանդ ծառայն Աստուծոյ [Կարապետին]

(Ջնջած եւ Ի. դ. կէսերի գրով, մանուշակագոյն թանաքով գրած՝ «Առաքելին»):
ամէն:

8. [Անուանք սուրբ հրեշտակացն] - ԶԳաբրիէլ եւ Վիքայէլ, եւ Վսաղաթիէլ, Նուրիէլ, Զիթայէլ, Թէափաեւ, Թուլթայէլ... չոր փայտ դառնայ ընդդէմ ծառային Աստուծոյ հաւատով պահօղ [Կարապետին] (Ջնջած եւ Ի. դ. կէսերի գրով, մանուշակագոյն թանաքով գրած՝ «Առաքելին»): ամէն:

9. [Աղաւթք սրբոց հրեշտակաց] - Գաբրիէլ, Միքայէլ, որք ունիք իշխանութիւն ի պատերազմի օգնել զանուն ձեր իշողացն... եւ հաւատով մերձողաց եւ ինդրօղ [Կարապետին] (Ջնջած եւ Ի. դ. կէսերի գրով, մանուշակագոյն թանաքով գրած՝ «Պեղնակեան Օհանջան որթի Առաքել»):

10. [Գիր չար ահին եւ չար նիաթի] - Ի Զիթեանց եւ ետես երկուս կանանց, զի լային եւ յոյժ ողբային եւ արիւն արտասուէին... եւ յանձնէ ծառային Աստուծոյ, Աստուած անուան քում կեցոյ՛ զիս եւ:

11. [Գիր գլխացաւի] - Ա[նուամբ] սրբոյ եւ անուամբն սրբոյ հօրն Զոսիմոսի սրբոյ ճգնաւորին, որ կացեալ Խ. (40) ամ ի ծերպս վիմաց... պահէ՛ ծառային Աստուծոյ. ողորմեա՛յ ինձ, զի հիւանդ եմ ես, բժշ[կեա՛]:

12. [Գիր կապելոյ ալքի] - Ս[ուրբքն՝] ելին ի լեառն Գալիլէա, գերինջ տեսին, ի վեր վազեաց, դուռնչն շան նմանեցաւ... մանաւանդ հաւատով պահօղ ծառայիցն Աստուծոյ:

13. [Այլ գիր կապելոյ ալքի] - Ս<ս>ուրբն Յովէլ հրեշտակն հրամանաւն Քրիստոսի ի լերինս յորս ելին եւ առին զծայնն երեխային... մանաւանդ ի պահօղ ծառային Աստուծոյ:

14. [Գիր ամենայն ցաւոց] - Ի զգիրսն Յիսուսի ի բանտին առաքեաց ի ձեռն աշակերտաց իւրոց եւ ասէ ցնա. Դու ես որ գալուց ես... ոչ երբէք մերձեան հաւատով մերձողացն զսա պահօղ ծառայիցն Աստուծոյ:

15. [Գիր քնոյ եւ հանգստի] - Բ[էլ] մեր Յիսուս Քրիստոս, որ արկեր զթմրութիւն ի վերայ նախաստեղծին Ադամա... մանաւանդ մանկանց ծառայիք Կարապետին:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Տե՛ս 5րդ բնագրի խորագրի մէջ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

Վերջում, անփոյթ նոտրով. Տեր Պալիեան Տեր Յակօբի որդի, Տէր Յակօբի որդի տիրացու [Կարապետ]ին. ամէն:

Ծնթ. Մէկը «Կարապետ» անունը ջնջել եւ տակը գրել է՝ «Թորոսին է»:

Նախորդից յետոյ, կանոնաւոր նոտրով. Տեր Պալիեան Տեր Յակօբի որդի, Տէր Յակօբի որդի, Թորոսի որդի Ատուր:

Նախորդից յետոյ, մատրտով, շղագիր, Ի. դ. Տէր Յակ[ոբի] որդի, Տէր Տէօփ-լէթի որդի, Յատուրի որդի, Ա[ր]մենակի որդի, Յովսէփի որդի, Բիւզանդի որդի Յակոբ:

15րդ բնագրի վերջում, Ի. դ. կէսի մանուշակագոյն թանաքով. Պեղնակեան Օհանջան որթի Առաքել:

17
ՀՄԱՅԻԼ

ԺԵ. Դ.

ՍՏԱՅՈՂ՝ Ալեքսան:

Թերթ՝ 1 (ժապաւինաձեւ): Նիւթ՝ թուղթ: ՄեծՈՒԹԻՒՆ՝ 251,6x6 սմ: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն. գրադաշտի լայնքը շուրջ 5 սմ երկու կողմից սեւով սաՀմանագծուած: ԳԻՐ՝ նոսրգիր:

ՄԱՆՐԱՆ ԿԱՐՁՈՒԹԻՒՆ. չունի: Խորագիրք՝ կարմիր:

ՎԻՃԱԿ՝ սկիզբը եւ վերջը թափուած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Աղօթք վասն կապանաց դիւաց եւ կախարդաց եւ աղանդաւորաց, եւ վասն դատաստանի աջողելոյ եւ վասն քաղցրութեան եւ երեսբախտութեան ~ Թագաւոր Հօր, ապաւէն ծարաւելոց, փրկիչ նեղելոց, որ վասն մեր խոնարհեցար ի Հայրական ծոցոյ... ծառայիս Աստուծոյ Ալիքսանին... Հերկիցս դու յերկիւղէ ի գիշերի եւ ոչ ի նեսէ որ թուչի ի տուէ:

Ծնթ. Բերուած վերջնատողը գրուած է սեւով գծուած բոլորակի շուրջը, որ վերաբերում է յաջորդ նիւթին, բայց սխալ հաշուելու պատճառով մտած է այս բնագրի մասի մէջ:

2. Աղօթք սրբոյն Ստեփանոսի ~ Ի քէն Հայցեմք արտասուագին... ծառայիս Աստուծոյ (չգրուած) օգնական եղիցի, պահապան. ամէն:

Ծնթ. Բոլորակի մէջ է, սրան յաջորդում է մի այլ բոլորակ՝ չգրուած:

3. Աղօթք սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ~ Խնդրեմք ի քէն, Հայր պատուական... ծառայիս Աստուծոյ Ալիքսան օգնական եղիցիս:

Ծնթ. Բոլորակի մէջ է, սրան յաջորդում է մի այլ բոլորակ՝ չգրուած:

4. Աղօթք սրբոյն [Յովհաննու Կարապետին] ~ Այլ եւ բարեխօսութեամբ... պահեա՛ եւ փրկեա՛յ զծառայս Աստուծոյ. ամէն:

Ծնթ. Սկիզբը բոլորակի մէջ է, աւարտը՝ նրա տակ, սրան յաջորդում է մի այլ բոլորակ՝ չգրուած:

5. Աղօթք պահպանութեան ~ Ի Յիսուս, դու ես օգնական իմ, եւ ի ձեռքո եմ յամենայն ժամ... փառք այժմ եւ անվաղձան յաւիտեանս. ամէն:

Ծնթ. Սկիզբը երկու բոլորակի մէջ է, աւարտը՝ երրորդի շուրջը, որ չգրուած է:

6. Աղօթք պահպանութեան ~ Հայր սուրբ, սրբեա՛ զիս, Հոգիտ սուրբ, մաքրեա՛ զիս... օգնեցեր ինձ եւ մխիթարեցեր զիս՝ Ալիք[ս]ան:

Ծնթ. Սկիզբը երկու բոլորակի մէջ է, աւարտը՝ երկրորդից յետոյ, ապա 7 սմ չգրուած տեղ:

7. Աղօթք սուրբ Հօրն Աբրահամու, զոր խոստացաւ Աստուծոյ զորդին իւր զՍահակ ի գենմունս ~ եւ էառ Աբրահամ զորդին իւր զՍահակ եւ տարաւ ի գենլիս իւր...

Ծնթ. Գրուած է յաջորդ բնագրի տողերի հետ շեղանկիւն հատումներով:

8. [Անունաք Սրբոց Նշանացն] ~ Բարեխօսութեամբ եւ աստուածային

սուրբ Նշանացն Քրիստոսի Աստուծոյ մերոյ եւ անբա[ր]բառ բարեխօսուացս... յանիրաւութենէ փրկեա՛յ զիս (այլ գրով՝ «Ալիքսան բարով վայելէ»):

Ծնթ. Սկիզբը գրուած է նախորդ բնագրի տողերի հետ շեղանկիւն հաստուծոյ ներով:

9. Աւետարանս ըստ Մաթէոսի վասն բարկութեան ~ Եւ մինչդեռ անցանէր ընդ այն Յիսուս, զհետ կոչէին... Իսկ փարիսեցիքն ասէին, թէ իշխանաւն դիւաց հանէ զգա դեւս [Թ. 27-34]: Օգնական եւ պահապան եղիցի ծառայիս Աստուծոյ Ալիքսանին. ամէն:

10. Աղօթք հրեշտակաց պահպանութեան ~ Գաբրիէլ, Միքայէլ, Ռաբայէլ, Դակուէլ... փայտ դառնայ ի դիմաց ծառայիս Աստուծոյ Ալիքսանին. ամէն:

11. Աղօթք ի յաշումն ամենայն իրա պահեսցէ Տէր Աստուած չար աչից եւ չար լեզուէ ~ Տէր, արդ, բարեխօսութեամբ ամենայն սրբոց քոց զօրացո՛ւ... օգնեա՛, Տէ՛ր Աստուած ծառայ Աստուծոյ Ալիքսանին:

12. Գիր գլխացաւի եւ աչաց ցաւի եւ նուզլայի. ոչ մերձենայ ~ Տէրն մեր Յիսուս Քրիստոս էառ Յովհաննէս եւ իջաւ ի Յորդանան... ծառայիս Աստուծոյ Ալիքսանին անփորձ եւ անսասան պահեսցէ. ամէն:

13. Աղօթք գլխացաւի ~ Գայր գետն ի Յորդանան եւ բերէր ծառ մի գեղեցիկ եւ պատուական... ազատեալ եղիցի ծառայս Աստուծոյ Ալիքսանին. ամէն... փրկեա՛ զմեզ ի հրոյն յաւիտենից, եւ քեզ փառք յաւիտեանս. ամէն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Տե՛ս բնագրերի վերջնատողերը:

18

ՀՄԱՅԻԼ

ԺԸ. դ.

ՄՏԱՅՈՂ՝ հետագայ. հաճի Սարգիս:

Թե՛րթ՝ 1 (ժապաւինածեւ): ՆԻԻԹ՝ թուղթ (սպիտակ եւ կապոյտ): ՄեծՈՒԹԻԻՆ՝ 261,8x7,2 + 32,7x21,5 սմ. վերջինս՝ [Բախտացոյց]: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նոտրգիր: ԳՈՅՆԵՐ՝ կարմիր, կանաչ, սեւ:

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻԻՆ.

1. Խաչ (կարմիր գծանկար, հանդուցադիծ):

2. Ներսէս Շնորհալի:

3. Գրիգոր Նարեկացի:

4. Բախտացոյց. անկիւններում աւետարանիչները, ձեռքներին գիրք, իրենց խորհրդանիշներով՝ մարդ, առիւծ, եզն, արծիւ, կենտրոնի բոլորակի մէջ արեգակ՝ ճաճանչ-ճառագայթներով, որոնց միջեւ եւ արեգակի շուրջ ԺԲ. կենդանակերպք իրենց անուններով եւ գաղափարադրերով (բացատրութիւնշարադրանքը տե՛ս բնագիր 12):

Ջարդագիր՝ թուշնային. Խորագիրք եւ Սկզբնատառք՝ կարմիր:

ՎԻՃԱԿ՝ բաւարար: ՆՇՈՒՄ՝ սկզբում, դարձերեսին, մանուշակագոյն թա-

նաքով. «279». ինչ որ հաւաքածուի համար է, գուցէ՝ տպագիր գրքերի շարքում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Աղօթք զօրաւոր սրբոյն Ներսիսի ասացեալ վասն պահպանութեան ծառայիս Աստուծոյ - Հաւատով խոստովանիմ եւ երկիր պագանեմ քեզ, Հայր եւ Որդի... լիցի պահապան եւ պարիսպ ամուր ընդդէմ ծառայիս Աստուծոյ (այլ գրով՝ «յաճի Սարգիս»):

2. Աղօթք որ Ուրբաթագիր ասեն, գրեն տան առ ինք պահէ, ազադ մնայ Աստուծով - Կարգամ առ քեզ Տէր երկնի եւ երկրի, ահեղ, հզօր եւ զօրաւոր... զամենայն չար ուրդայթն, զխիթն եւ զլիցաւն ի ծառայէս Աստուծոյ (այլ գրով՝ «յաճի Սարգիս»):

3. Աղօթք Գրիգորի Նարեկացոյն - Որդի Աստուծոյ կենդանոյն, օրհնեալ զամենայնի Հօրդ ահաւորի... այժմ եւ միշտ եղիցի պահապան ծառայիս Աստուծոյ (այլ գրով՝ «յաճի Սարգիս»):

4. Աղօթք չար քամու - Սուրբ կոյսն Մարիամ նստեալ էր աղբիւրն սրբութեան... բշկուկութիւն արա՛ բշկուկութիւն ծառայիս Աստուծոյ:

5. Վասն չար խթի եւ զօնջի - Անգուկիոս ելանէր ի ծովէն եւ թաւալէր ի վերայ թաւալման ջրոյ... ոչ մերձենաս ի ծառայս Աստուծոյ (չգրած), արդ, կապեալ լիցիս անլոյծ կապանօք՝ մինչ գալուստն Քրիստոսի. ամէն:

- Չար իշխանքն հալածին, որք ընդ ծառայս քո մարտնչին (չափածոյ, 3 քառատող)...

- Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, ահաս, դահաս, ասկասիաս, ասպուռթալի... ծառայս Աստուծոյ (այլ գրով՝ «յաճի Սարգիս»):

6. Պահպանութիւն հրեշտակաց - Գաբրիէլ, Միքայէլ, Ռափայէլ, Դակուէլ, Փանուէլ... պահեա՛ եւ փրկեա՛ զծառայս Աստուծոյ (այլ գրով՝ «յաճի Սարգիս»):

7. Վասն ամենայն ցեղ ցաւոց - Գայր գետն Յորդանանու եւ բերէր ծառ մի գեղեցիկ եւ պատուական... լիցի բշկուկութիւն ծառայիս Աստուծոյ (այլ գրով՝ «յաճի Սարգիս»):

8. Վասն գլխցաւի - Յանուն Աստուծոյ եւ յանուն սուրբ Աստուածածնին եւ Յովհաննու Կարապետի... լիցի բշկուկութիւն ծառայիս Աստուծոյ (այլ գրով՝ «յաճի Սարգիս»):

9. Վասն ամենայն պիղծ ցաւոց - Տէ՛ր Աստուած զօրութեանց, դու ես աղբիւր բշկութեան... կարգասցուք զանուն ամենասուրբ Երրորդութեան ի վերայ ծառայիս Աստուծոյ (այլ գրով՝ «յաճի Սարգիս»):

10. Վասն չար նազարի - Հրանիւթ, Հրափայլ, Հրատն, Համատուն, Համակեղ, որ էք սպասաւորք Աստուծոյ... չար կայարանքն պատառի եւ խաւար դառնայ ի գիմաց ծառայիս Աստուծոյ (այլ գրով՝ «յաճի Սարգիս»):

11. Վասն բախտի եւ դալեխի - Կայր Մովսէս յեզր Կարմիր ծովուն, եւ

արտասուեաց Մովսէս ի խորոց սրտի... կապեալ լիցի ամենայն չարկամաց լեզուէն ի դէմ ծառայիս Աստուծոյ (այլ գրով՝ «յաճի Սարգիսին»):

32,7x21,5 սմ մասը, ստացուած բուն մասի լայնքի 3 շերտ իրար սոսնձելով.

12. [Բախտացոյց] - [Յ]այնժամ բացան երկիրք եւ իջին ԿԶ. Հրեշտակք, եւ ունէին ԿԶ. բանալիս, դէպ եղ[եւ] նոցա Տէր մեր Յիսուս Քրիստոս եւ ասէր. Ո՞ւր երթաք, եւ նոքա ասեն. Տէ՛ր, երդամք մտանեմք ի ծառայն քո (չգրած), զգուռն բարւոյ բանամք եւ զգուռն ողորմութեան վաճառի, Հրամայեաց Տէր մեր Յիսուս Քրիստոս եւ ասէ. Գնացէ՛ք, եւ ես օգնական լինիմ ծառայիս իմոյ (չգրած) յորժամ երեւնայ յաչս դատաւորաց, թագաւորաց, ընկերաց եւ մեծամեծաց, առնեմ զամենայն մարդոյ սիրտն քան զանուշն անուշ, քան զշաքարն քաղցր, քան զմոմն կակուղ, քան զջուրն խոնարհ, քան զարեգակն պայծառ, քան զլուսին ի լրումն ի դէմ ծառայիս Աստուծոյ (չգրած):

Բոլորակի շուրջ.

Կարմրով, արտաքին առաջին շրջանով. Սարաթիէլ, Տածիէլ, Համրաքիէլ, Համազարդ եւ Համասփիւռ, որ էք Հրեշտակք եւ սպասաւորք բանին Աստուծոյ, զի ունիք Համարձակութիւն ընդդէմ աթոռոյն Աստուծոյ:

Կանաչով, երկրորդ շրջան. եւ յանուն/մեր դայ// որպէս Հայրն Աստուծոյ յառաքումն Որդւոյն [քա]ղցու, եւ Սուրբ Հոգին ի կենսագործել զազգս աշխարհին քաղցու, որպէս պտուղն յաչս Եւայի քաղցու, որպէս խօսին Եւայի յականջս Ագամայ քաղցու, որպէս շաքարն ի մէջ եղէկին քաղցու, որպէս մեղուն ի գործս ծաղկանց քաղցու, այնպէս քաղցր Հայու եւ տաճկի միտքն ի վերայ (չգրած):

Կարմրով, երրորդ շրջան. եւ բացէ՛ք զգուռն վաճառի եւ բանտի եւ մօհպաթի առ ամենայն իշխանս եւ բռնաւորս ընկերաց կամ մեծ կամ փոքու քաղցրութեանց սիրտն քան զնուշն անուշ, քան զշաքար քաղցր, քան զմոմն կակուղ, քան զջուրն խոնարհ, քան զարեգակն պայծառ, քան զլուսին ի լրումն, ի դէմ[ս] դուք արագահաս լերուք փութանակի ծառայիս Աստուծոյ (չգրած):

Սեւով, չորրորդ շրջան. Որպէս Եղիա երկինքն կապեաց, որպէս Դանիէլ զբերան առիւծոյն կապեաց, որպէս Սողոմոն զգուռն դիւացն կապեաց, որպէս Յեսու Նաւեայ զորդին արեգական կապեաց, որպէս Տրտաթ զԳեառեհոնն կապեաց եւ սպան, որպէս Դաւիթ զԳողիաթն պարսաքարաւ եհար եւ սպան զնայ, այնպէս կապեալ լիցի ամենայն չար կամաց լեզուէն ի դէմ ծառայիս Աստուծոյ (չգրած):

Կարմրով, հինգերորդ շրջան. Կենդանամայէլ, Կենդանամայէլ, որ էք սպասաւորք Աստուծոյ, դուք ճանապարհորդակից լերո՛ւք ծառայիս Աստուծոյ (չգրած) խաղաղութեամբ տարէ՛ք զնա ի տեղին իւր, ի բարի եւ ի վաճառ եւ շահաւորս արարէ՛ք սմայ անուամբն Հօր եւ Որդւոյն եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

Տե՛ս բնագրերի վերջնատողերը:

19
ՀՄԱՅԻԼ

ԺԸ. դ.

ՍՏԱՅՈՂ՝ Հայրապետ:

ԹԵՐԹ՝ 1 (ժապաւինաձեւ): ՆԻԻԹ՝ Թուղթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 183x7,5 սմ:
ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նոտրգիր: ԳՈՅՆԵՐ՝ կարմիր, կանաչ, դեղին, սեւ:
ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻԻՆ.

1. Կապումն թպղայի եւ ալքի:

Խորագիրք եւ Սկզբնատառք՝ կարմիր:

ՎԻՃԱԿ՝ սկիզբը եւ վերջը թափուած. եզրերի մաշուածքներն անարուեստ
նորոգած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1. Գիր թպղի եւ չար ալքի, որ ոչ մերձեցնայ ի ծառայս Աստուծոյ Հարայ-
պետիս. ամէն ~ Սուրբն Պետրոս եւ սուրբն Պօղոս եւ սուրբն Անոս, եւ սուրբն
Շիղայ եւ սուրբն Անդրէաս զնացին առ ճանապարհաւ եւ տեսին զալն... Հո-
նիս իշխանութիւն եւ հրաման մերձեցալ ի աղախին Աստուծոյ Հարապետիս.
ամէն... զդեւն եւ մանգաւն զսատանայն ի դիմաց ծառայիս Աստուծոյ Հարայ-
պետիս... Թէ եագին հարկանես, Թէ քունն զրուցես, Թէ /// ունես /// (Թափուած):

2. [Կապումն սատանայի] ~ /// ութեանց դունդք, պակասին խաւարասի-
րացն հոգիք, անդընդոց մատնին, հրեշտակ աւարտին, կապին նշանաւ խա-
չին... լո՛ւր խնդրուածոց ամենահառաչ ձայնիս հեծութեան միայն բասմ ///
(Թափուած):

Ծնթ. Ստացող Հայրապետի անունը գրուած է գրչի ձեռքով, բուն հմայիլը
գրելուց ժամանակ անց, աւելի մանր գրերով:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Ծնթ. Տե՛ս բնագրի քաղուածքները:

20
ՀՄԱՅԻԼ

ԺԸ. դ.

ԹԵՐԹ՝ 1 (ժապաւինաձեւ): ՆԻԻԹ՝ Թուղթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 66,5x5,7 սմ:
ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն. գրագաշտի լայնքը 5 սմ, երկու կողմից զոյգ կարմրով
սահմանափակուած: ԳԻՐ՝ նոտրգիր: ԳՈՅՆԵՐ՝ կանաչ, կարմիր, կապոյտ, ոսկե-
գոյն:

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻԻՆ.

1. Վեցթեւ աստղ, մէջը եօթ բոլորակ՝ արաբատառ մակագրութեամբք:

2. Ծաղկազարդերով շրջապատուած զարդաշրջանակի մէջ հնգաթեւ աստղ,
թեւերի միջեւ եւս հինգ փոքր, գծանկար աստղ:

3. Միակերտ ծաղկազարդերով եզերուած երեք շրջանակ, մէջները հմա-
յագրեր:

ՎիճԱԿ՝ սկիզբը եւ վերջը թափուած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. [Աղերս առ Հրեշտակա Աստուծոյ] – Ո՛վ սուրբ Ռափայէլ, պարգեւեա՛, եւ սուրբ Կռետիրոս՝ կատարեա՛, եւ եկեցեն յիս գթութիւնք քո, եւ կեցից, զի օրէնք քո խոսք իմ էին... (մէջը մի տող հմայագրեր):

2. [Բոլորակ հմայագրերի. շուրջանակի եւ 9 վանդակով քառակուսու կողերին ու մէջը]:

– Կամ թէ՛ ո՛վ սուրբ Միքայէլ պարգեւեա՛, եւ սուրբ Նադանիէլ՝ կատարեա՛... (մէջը երեք տող հմայագրեր):

– [Բոլորակ արաբական տառերին նման հմայագրերի, 25 վանդականոց քառակուսու մէջ, որի կողերին՝ «Ճեպրայիլ», «Միքայէլ», «Ասրայֆիլ», «Ազրայիլ»]:

– Ո՛վ սուրբ Ուրիէլ, պարգեւեա՛, եւ սուրբ Մուսիէլ՝ կատարեա՛... (մէջը երկու տող հմայագրեր):

– [Շեղակի գծուած, 16 վանդակով քառակուսի՝ մէջը արաբական թուանշաններին նման հմայագրեր]:

– Ո՛վ սուրբ Բարադիէլ, պարգեւեա՛, եւ սուրբ Սուքիէլ՝ կատարեա՛... (1 տող հմայագրեր) ի քէնէ գոհութիւնս իմ Տէր յեկեղեցիս մեծըս օրհնեցից զքեզ Ա.Ճ.Ժ.Ռ. եւ սա [բանալի օղակէտազիր ծածկազրի՝ օ.՝ Ա., օ.՝ Բ, օ.՝ Գ եւ այլն]... փաշանն իպնի ճէմալէստին:

21

ՀՄԱՅԻԼ ՏՊԱԳԻՐ

[Կ. ՊՈԼԻՍ]

ՌՃՀԳ. ~ 1724

ՍՏԱՅՈՂ՝ Գասպար, ապա որդին՝ Յարութիւն:

Թեթի՛ 1 (ժապաւինաձեւ). երկու կտոր: Նի՛թի՛ թուղթ: ՄեծՈՒԹԻՒՆ՝ 629x9,9 սմ (43 սմ երկարութեամբ տպուած մասերն իրար սոսնձուած ըստ կարգի): ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն. գրադաշտի լայնքը եզերագարդով հանդերձ 8 սմ: ԳԻՐ՝ բոլորգիր. տպագիր. որոշ խորագրեր նոտրգիր: ԳՈՅՆԵՐ՝ կարմիր, կանաչ, դեղին, ոսկեգոյն:

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ. տպագիր՝ գունաւորած. Ա. կտոր՝

1. Հա՛յր Աստուած, արարիչն ամենայնի եւ երկրի ստեղծող, օգնական լեր եւ պահապան քո ծառային որդին Գասպարին. ամէն (այլ ձեռքով, սեւով՝ «որդի Յարութիւն»):

Ծնթ. Գասպարի անունը ձեռքով եւ կարմիր թանաքով հետեւողաբար գրուած է բոլոր նկարների մակագրութիւնների եւ բնագրերի մէջ, իսկ «որդի Յարութիւն» յաւելումները երբեմնակի են եւ միշտ սեւ թանաքով. այս անունները կան նկարների գրեթէ բոլոր մակագրութիւնների եւ բնագրերի մէջ, բայց բերել ենք միայն մի քանիսը:

2. «Երկոտասան առաքեալքն Քրիստոսի Աստուծոյ մերոյ. բարեխօս լերուք ծառայիս Աստուծոյ Գասպարին» (անունը՝ ձեռագրով եւ կարմրով):

3. «Գառն Աստուծոյ որ բառնայ զմեզս աշխարհի, ողորմեա՛յ ծառայիս Աստուծոյ»:

4. «Քրիստոս ըսկուն մէջն պատարագի որ բառնա զմեզս աշխարհի սուրբ մարմին եւ արիւն Տեառն, օգնական լե՛ր ծառայիս Աստուծոյ»:

Ծնթ. Խաչեղութիւնն է, Քրիստոսի ոտքերը սկիհի մէջ, խաչի վերին թեւի տախտակին՝ «ՅՆԹՀ»

5. «Քրիստոսի գերեզմանն է... զծառայս քո զԳասպար»:

6. Խաչեղութիւն. խաչի տակ երեք Մարիամ (ունի «Գր»՝ Գրիգոր Մարգու-
լանեցու անուանատառերը):

7. Աստուածածին կանգնած, մանուկ Քրիստոսը գրկին, ձուածեւ փառապ-
սակի մէջ:

8. Յովհաննէս Կարապետ:

9. Սաեփաննոս Նախավկայ:

10. Գրիգոր Լուսավորիչ:

11. Հրեշտակ:

12. Վեցթեւան հրեշտակ, վերեւում՝ «ՄՐ ՄՐ / ՄՐ ՏՐ»:

13. Աբրահամի զոհաբերութիւնը (հրեշտակն ամպերի վրայ, ծառի վրայ խոյը չկայ):

14. Գրիգոր Նարեկացի:

15. Գէորգ զօրավար, ձիաւոր, նիզակի ձեռին:

16. Սարգիս զօրավար եւ որդին Մարտիրոս, ձիաւոր, գուրզով:

17. Մատթէոս աւետարանիչ:

18. Մարկոս աւետարանիչ:

19. Ղուկաս աւետարանիչ:

20. Յովհաննէս աւետարանիչ:

21. Սողոմոն իմաստուն կապէ զգեւ:

ԾԱԿԱՏԱԶԱՐԴ՝ 4րդ բնագրից առաջ:

ՎԻԾԱԿ՝ սկիզբն ընկած՝ թերի, բնագրերը խառնուած, մաշուած, ներկայ վիճակով բաժանուած, մի քանի հին նորոգութիւն կրած: Ամրացնելու համար չգրուած ք. երեսին փակցրել են սոսնձանիւթով ժապաւէն, որ յետոյ անջատու-
ել է, բայց սոսնձանիւթը եւ նրա թողած համատարած դեղնութիւնը մնացել են:

Ծնթ. Հմայիլս արձանագրուած եւ համարակալուած էր որպէս երկու միա-
ւոր՝ Թիւ 21 եւ 22, առաջինը բաժանուած էր չորս կտորի, երկրորդը՝ վեց. նկա-
տելով որ երկուսն էլ միեւնոյն տպագրի մասերն են, ըստ բնագրերի եւ մի կտո-
րի վերջում կամ միւսի սկզբում երեւացող տառամասնիկների պարզեցինք բո-
լոր կտորների հերթագայութիւնը եւ ըստ այդմ միացրինք իրար: Այս տպագրի
Հայաստանի ազգային գրադարանին պատկանող մի այլ, երեւի՝ կրկին պակա-
սաւոր օրինակով արուած նկարագրութեան (Հայ գիրքը 1512-1800 թվական-
ներին. Հայ հնատիպ գրքի մատենագիտութիւն, [Կազմեցին] Ն. Ա. Ոսկան-
յան, Ք. Ա. Կորկոտյան, Ա. Մ. Սավալյան, Երեւան, 1988, էջ 259-60, չ՝ր 345)

մէջ փորագրեր պատկերների քանակը նշուած է՝ «23(°)», միայն խորագրերով (առանց սկզբնատողերի) թուարկուած բնագրերի քանակը 28 է, իսկ նրանց հերթականութիւնը՝ այս օրինակից տարբեր: Բնագրերի եւ պատկերների ճիշտ կարգը պէտք է պարզել նոյն նկարագրութեան մէջ նշուած այլ օրինակներով (պահպանուած են Մխիթարեանց Վիեննայի մատենադարանում, Պոլսի հայոց պատրիարքարանում եւ Հայաստանի Մարտունո շրջանի բնակիչ Հայրիկ Ղազարեանի հաւաքածուի մէջ):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Աղօթք վասն կապանաց զիւաց եւ կախարդաց եւ աղանդաւորաց, եւ վասն դատաստանի աջողելոյ եւ վասն քաղցրութեան եւ երեսբախտութեան - Թագաւոր հզօր, ապաւէն ծարաւելոց, փրկիչ նեղելոց, որ վասն մեր՝ խոնարհեցար ի հայրական ծոցոյ... բարեխօս լե՛ր, մա՛յր Աստուծոյ, ծառայիս քո Գասպարի որդի Գասպար:

2. Աղօթք Տէրունական (այլ ձեւքով, սեւով՝ «որդի Յարութիւն») - Հայր մեր որ յերկինսդ ես...

3. Սուրբ Աստուած սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր...

4. Աղօթք կապանաց զիւաց եւ կախարդաց եւ աղանդաւորաց, եւ վասն դատաստանի աջողելոյ եւ վասն քաղցրութեան դատաւորաց ի յերեսս ծառայիս Աստուծոյ Գասպարին» (այլ ձեւքով, սեւով՝ «որդի Յարութիւն») - Թագաւոր հզօր, ապաւէն ծարաւելոց, փրկիչ նեղելոց... Ոչ երկիցես դու յերկիւղէ ի գիշերի եւ ոչ ի նեպէ որ թռչի ի տուէ:

5. Աղօթք սուրբ կոյս Մարիամ Աստուածածնին - Աստուածածին ամէնօրհնեալ... (չափածոյ, 2 քառեակ):

6. Աղօթք սրբոյն Յովհաննու Կարապետին - Այլ եւ բարեխօսութեամբ սրբոյն Յովհաննու Կարապետին...

7. Աղօթք սրբոյն Ստեփաննոսի Նախավկային - Ի քէն հայցեմք արտասուլազին, / Նախավկայ Տեառն արարչին...

8. Աղօթք առ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին - Խընդրեմք ի քէն, հա՛յր պատուական...

9. Աղօթք պահպանութեան - Հայր սուրբ, սրբեա՛յ զիս, Որդիս սուրբ, պահեա՛յ զիս...

10. Աղօթք պահպանութեան - Տէ՛ր Յիսուս, դու ես օգնական իմ...

11. Աղօթք հրեշտակաց պահպանութեան - Գաբրիէլ, Միքայէլ, Ռափայէլ...

12. Այս եւ անուանք հրեշտակաց - Սարիէլ, Սարակմիէլ, Գուբիէլ, Գաճիէլ...